

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ.
Հ. ԱՄԱԼՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՍՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2024 թ., հոկտեմբերի 10)

Երևան - 2024

ՀՏԴ 811.19'373(082)

ԳՄԴ 81.51-3գ43

Բ 300

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:
Խմբագիր՝ ր. գ. դ. Վ. Լ. Կատվայան

Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան
Բ 300 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի
նյութեր (Երևան, 2024 թ., հոկտեմբերի 10).- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ
հրատ., 2024.-102 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում
2024թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած «Բառագիտության արդի
խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերը:

Գիտաժողովը նվիրված էր անվանի լեզվաբան Հայկ Ամալ-
յանի ծննդյան 100-ամյակին: Հ. Մ. Ամալյանի հիմնական աշխա-
տությունները վերաբերում են բառարանագիտական (բառարանա-
գրության պատմության և տեսության) հարցերին:

ՀՏԴ 811.19'373(082)

ԳՄԴ 81.51-3գ43

ISBN 978-9939-970-05-9

© ՀՀԳԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2024

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆԵՂ ԲԱՅԻ ԻՍՄԱՏԱԳՈՐԾՈՒԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Գալստյան Անահիտ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բ.գ.թ., ավագ գիտաշխատող

Թեյյան Լեոնիդ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բ.գ.թ., դոցենտ, ավագ գիտաշխատող

Հիմնաբառեր: Իմաստային կառուցվածք, հարադրություն, կառուցվածքային դասակարգում, կիրառության ոլորտ, բարբառային կիրառություն, նույնարմատ և տարարմատ կազմություններ, լեզվի հասարակական տարբերակներ:

Բառապաշարի քննությունը ամենատարբեր հայեցակետերով է իրականացվում, և նույնիսկ բառային մեկ միավորի համակողմանի քննությամբ կարելի է գաղափար տալ լեզվակիր հանրության մտածողության, հոգեբանության, այլև լեզվի իմաստային և կիրառական ներքին շերտերի յուրահատկությունների վերաբերյալ: Այս տեսակետից արդյունավետ կարող է լինել բառային այնպիսի միավորի ընտրությունը, որն իմաստի վերացականության, գործածության հաճախականության, զուգորդելիության հնարավորությունների առումներով որոշակի պատկերացում է տալիս և՛ լեզվամտածողության ինքնատիպության, նաև հոգեկերտվածքի, և՛ լեզվի բառակազմական ու կիրառական առանձնահատկությունների մասին: Կարծում ենք, որ այդ խնդիրը հայերենի պարագայում կարելի է իրականացնել *անել* բայի իմաստակիրառական քննությամբ, որի փորձ է սույն հոդվածը:

Հոդվածում քննվում են *անել* վերացական բայի իմաստների, նրանով կազմությունների տարբեր դրսևորումները լեզվի հասարակական և տարածական տարբեր ոլորտներում՝ գրական հայերեն, ժողովրդախոսակցական հայերեն, բարբառ (հիմնականում Արցախի բարբառի նյութը), ժարգոն, մանկական խոսք: Դիտարկվում են *անել* բայի իմաստները, ապա և նրանով կազմված հարադրությունները: Այս վերջինները քննվում են ըստ հարադրության բաղադրիչների քանակի, ապա՝ ըստ հարադիր բառի խոսքիմասային պատկանելության, ըստ հարադրության՝ նույն իմաստն արտահայտող այլ բայով միաբառ դրսևորման, ինչպես նաև *անել* բայի՝ այլ բառերի փոխարկման իրակությունները, ըստ դրանց՝ լեզվի տարբեր շերտերում տարածվածության:

Անել բայը ըստ խոսքային և հաղորդակցական իրադրության, համատեքստային անհրաժեշտության կարող է նշանակել *ամեն ինչ անել*՝ գործել (նաև՝ *հյուսել* իմաստով), իրագործել, իրականացնել, աշխատանք կատարել, ձևակերպել, հարմարեցնել, սարքել, օգտագործել, պիտանի դարձնել, վերածել, շինել, դեր կատարել, օգնել, նպաստել և այլն (մանրամասն տե՛ս հայերենի բացատրական բառարանները):

Անել-ը հայերենի ամենից ավելի ընդհանրական իմաստ արտահայտող և ըստ այդմ էլ գուգորդության առավել մեծ հնարավորություններով օժտված բայական միավորն է: Այն իմաստային առումով բառակազմական լայն շառավիղ ունի և իմաստային մեծ տարողունակություն է դրսևորում: Այս տեսակետից այն համեմատելի է ռուսերենի *делать*, ֆրանսերենի *avoir, faire*, անգլերենի *make* բայերի համապատասխան գործածությունների հետ:

Անել բայով կազմված հարադրությունները կարող են լինել երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ: Երկբաղադրիչ են, օրինակ, *բան անել, անգիր անել, խմոր անել, աղմուկ անել, դիտողություն անել,*

սուս անել, զրույց անել, բացառություն անել, խաղ անել, կատակ անել, մարզանք անել, տակոպ անել, տակը անել, օգուտ անել, գովք անել, մատնացույց անել, խորոված անել, վարուցանք անել, անեծքակոխ անել, խելքահան անել, ջուր անել, ախտա անել, ծիկ անել, խուրդա անել, խորաթա անել, գանգատ անել, մատաղ անել, լայ-լայ անել և այլն:

Բազմաբաղադրիչ հարադրությունները եռանդամ, քառանդամ, հնգանդամ և այլ կազմություններ են:

Եռանդամ հարադրություններ են՝ *ձեռքից եկածն անել, գործ բաց անել, դարդին դարման անել, խոսքները մեկ անել, ոտքին տեղ անել, ձեռքերը խաչ անել, մի բան անել, ջիզջարը դաղ անել, լացը ծիծաղ անել* և այլն:

Քառանդամ են՝ *սուգ ու շիվան անել, նեղ անել, տեղ անել, քոռ ու փուչ անել* և այլն:

Հնգանդամ են՝ *սևը ներս, սպիտակը դուրս անել, ոտ ու գլուխը մեկ անել* և այլն:

Բառակազմական տեխնիկայի տեսակետից *անել* բայով կազմված հարադրությունների մեջ կարելի է առանձնացնել երեք խումբ.

1. Բառեր, որոնց հարադիրը (անվանական մասը) կարող է նաև համադրական բայաձևի հիմք լինել: Այդ հիմքերը հիմնականում գոյական խոսքի մասին են պատկանում: Այսպես՝ *պատվաստ անել-պատվաստել, ուխտ անել- ուխտել, վար անել- վարել, գրտնակ անել-գրտնակել, հունձ անել-հնձել, բաց անել- բացել, սուգ անել-սգալ, միտք անել-մտածել, կար անել-կարել, նկար անել- նկարել, գործ անել-աշխատել(բրբ.), խաղ անել-խաղալ, ներկ անել- ներկել, գովք անել-գովել, կատակ անել-կատակել, ջանք*

անել-ջանալ, աղմուկ անել-աղմկել, քաղհան անել-քաղհանել. Խայտառակ անել-խայտառակել և այլն: Անել բայը այս կազմություններում գործառապես համարժեք է բայակազմական -ել ածանցին:

2. Կազմություններ, որոնք ունեն տարահիմք միաբառ հոմանիշներ՝ մտիկ անել-նայել, հուշտ անել-վանել (հեռացնել), քեֆ անել-զվարճանալ (ուրախանալ), աղցան անել-ծեծել, տնազ անել-ծաղրել, տնազն անել (հանգր անել)-նմանակել, ականջ անել-լսել (ունկնդրել), ախուս անել(բրբ.)-լռեցնել և այլն:

3. Հարադրությունը չունի նույնահիմք կամ տարահիմք համադրական ձևեր. դրանք հիմնականում դարձվածային արժեք ունեցող բառակապակցություններ են, և դրանց իմաստները կարելի է ներկայացնել միայն նկարագրորեն: Այսպես.

Մոտ-մոտ անել-մտերմություն ցույց տալ, սիրալիրություն անել.

Ստակ անել(բրբ.)-1.հիմնահատակ ավերել 2.հողը փորել մինչև կարծր շերտին հասնելը (այս իմաստը ՂԲԲ-ում նշված չէ).

Ախուվախ անել-վշտից՝ ցավից ևն հառաչել (ԱՀԲԲ).

Միս անել-մորթված անասունի մսեղիքը պատրաստել օգտագործման և այլն:

Այս կարգի հարադրությունների գոյությունը, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ հարադիրն ինքնին չի կարող հանդես գալ որպես բայահիմք, և վերլուծական ձևը լրացնում է լեզվի բացը»:

Ըստ հարադիր հիմքի խոսքիմասային պատկանելության լի-նում են գոյականով, ածականով, դերանվամբ, մակբայով, ձայնարկությամբ արտահայտված հարադիրներով կազմություններ: Գոյական հարադիրները ակնհայտորեն զերակշռում են: Հարադրավոր

¹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 226:

բառակապակցությունների կազմում գոյականը կարող է լինել ուղղական (*ականջ անել, սիրտ անել, հավես անել, փորձ անել, չափար անել, գործ անել, կրակ անել, խմոր անել, հաց անել* և այլն) և թեք հոլովներով (*սևին անել, աչքով անել, հորով-մորով անել, աչքով-ունքով անել, գլխով անել, ձեռքով անել* և այլն): Ածական հարադիրով կազմությունները շատ չեն՝ *հալալ անել, հարամ անել, խայտառակ անել, անպատիվ անել, բնաջինջ անել, թևաթափ անել, բմբլահան անել, քոքահան անել, իրարահան անել, մտահան անել* և այլն: Թվականով և դերանվամբ արտահայտված հարադիրները, բնականաբար, ավելի սակավաթիվ են՝ *մեկը երկու անել, մեկը հազար անել, իրենով (ինձնով, քեզնով, իրենցով, մեզնով, ձեզնով) անել, զիրավ անել (զբաղեցնել-բրբ.)* և այլն: Չայնարկությամբ արտահայտված հարադիրներ՝ *օֆ անել, վայ անել, վույ-վույ անել, պահ-պահ անել, հայ-հույ անել, ծիկ անել* և այլն:

Անել բայի բարբառային կիրառություններն ընդհանրապես հիմնական մասով համընկնում են գրական լեզվի համապատասխան կիրառություններին, սակայն դրանք կարող են դրսևորել նաև միայն տվյալ տարածքին հատուկ լեզվամտածողությամբ պայմանավորված առանձնահատկություններ: Արցախի բարբառում, օրինակ, *անել* նշանակում է գործել, հյուսել (*կարպետ անել, գուլբա անել*), տեղավորել (*անասունը գոմն անել*), արգելափակել (*տոն անել*), վաստակել (*անես-անես, տերտակ նստես, անե Հուրին, ծաղկե Փուրին, անես-անես, կյետին նստած ալեր մաղես-ՂԲԲ*) և այլն:

Անել բայով կազմված դարձվածային որոշ միավորներ Արցախի բարբառում ունեն նաև *ածել* բայով նույնիմաստ կամ տարիմաստ տարբերակներ (*ածել* բայը գրաբարում նաև *անել* է նշանակել², և բարբառը պահպանել է այս իմաստը): Օրինակներ՝ *նի*

² Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հումանիշների բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2006, էջ 6:

անել-նի ածել, դեն անել-դեն ածել, վեր անել-վերածել և այլն: Հանդիպում են նաև նույնիմաստ հարադրություններ, որոնցում նույն անվանական հիմքը հարադրվում է տարբեր վերացական բայերի հետ, ինչպես՝ *մտիկ անել-մտիկ տալ, ական անել-ակը տալ* (ՂԲԲ), *բոստան անել-բոստան դնել* և այլն (ի դեպ, առօրյա խոսքում հաճախ շփոթում են *աչքով անել* և *աչքով տալ* դարձվածքները՝ դրանց նույն իմաստը վերագրելով):

Գրական լեզվի համար համեմատաբար նոր բառակապակցություններից են *ծնունդ (կնունք, ատամնահատիկ, նշանդրեք, հարսանիք) անել, շնորհանդես անել, մաքրություն անել, հայտարարություն անել, միջնորդություն անել, ընդմիջում անել*: Այն, որ որևէ գործողություն անվանելու պահանջը լեզվի մեջ առավել հաճախ լրացվում է *անել* վերացական բայի միջոցով, ակնհայտ երևում է գրեթե ամեն օր ստեղծվող և գործածվող բազմաթիվ նորակազմություններում՝ *ցուցահանդես անել, կարիերա անել, ստրիպտիզ անել, նստացույց անել, դասադուլ անել, տատու անել* և այլն:

Հայերենի տարածքային տարբերակներից բացի *անել* բայը հաճախված է նաև կիրառության այլ ոլորտներում: Ահա մի քանի օրինակ մանկական խոսքից՝ *տիտիկ անել, բայ-բայ անել, նյամ-նյամ անել, պաշիկ անել, պապար անել* և այլն: Իսկ ժարգոնային խոսքում *անել*-ը առավել հաճախ գուգորդվում է օտարալեզու հարադիրների հետ՝ *պալիտ անել, կիդատ անել, հոպստոպ անել, շմոն անել* և այլն: Այս բայը գործածվում է նաև որպես մեղմասություն:

Հայերենում պատճառականության իմաստը առհասարակ արտահայտվում է *-ցն-* ածանցի կամ էլ անորոշ դերբայի և *տալ* բայի հարադրման միջոցով, սակայն կա նաև պատճառական իմաստի արտահայտման յուրահատուկ ձև՝ *անել* բայի և անվանական հիմքի գուգորդումով՝ *քնով անել-քնեցնել, մոնջ անել (ախուս անել)-*

լռեցնել, ջուր անել- թացացնել (հմմտ. նաև՝ պար ածել-պարեցնել) և այլն:

Այսպիսով, *անել* բայը հայերենում ունի ընդհանրական մի գործածություն. երբ գործողությունը դեռ որևէ բառով չի նշանակված, այն նշվում, արտահայտվում է որևէ գոյականի (կամ այլ բառի) և *անել* բայի միջոցով: Դա տեղի է ունենում, քանի որ *անել*-ը որևէ նյութականություն, կոնկրետություն չի արտահայտում, վերացական իմաստ ունի: Եվ պատահական չէ, որ այս բայը ակտիվորեն կիրառվում է այսօրվա տեխնադարում մեր լեզվի մեջ անհրաժեշտաբար ներմուծվող հասկացությունները նշանակելու համար (*քլիք անել, սեյվ անել, սրբչ անել, քոփի անել, ինստալացիա անել, չաթ անել, լայվ անել, քսերոքս անել, սելֆի անել* և այլն), իսկ դրանց հայերեն տարբերակների ստեղծման հնարավորությունը կբացահայտի ժամանակը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՂԲԲ-Ա.Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Եր., Էդիթ Պրինտ, 2013:
2. ԱՀԲԲ-Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:

Галстян А., Телян Л. - Семантико-функциональный анализ глагола *անել* /делать/ армянского языка. - В статье анализируются разные употребления универсального глагола *անել* в различных сферах языка /разговорная речь, диалекты, детская речь, жаргоны, и т. д./. Исследуются словосочетания, состоящие из двух, трех, четырех и более компонентов.

Ключевые слова: семантическая структура, аналитический глагол, структурная классификация, сфера употребления, диалектное употребление, однокоренные и разнокоренные слова, социальные варианты языка.

Galstyan A., Telyan L.- Semantic and functional analysis of the verb ա՛նէլ /to do/ of the Armenian language.-The article analyzes the different uses of the universal verb ա՛նէլ in the various spheres of language /colloquial speech, dialects, children's speech, jargons, etc./. Word combinations consisting of two, three, four or more components are studied

Keywords: semantic structure, analytical verb, structural classification, sphere of use, dialect usage, single-root and multi-root words, social variants of the language.

**ՀԱՅԵՐԵՆԻ ԽԱՌՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐՆ. ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ,
ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԵՎ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ**

Խաչատրյան Վալենտին

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

բ.գ.թ., դոցենտ, ավագ գիտաշխատող

valentin.khachatryan81@gmail.com

Բանալի բառեր. հապավում, խառը հապավում, տառային, վանկային, հապավական բարդություն, բաղադրիչ, դասակարգում, տարբերակում, գրություն:

Նախաբան: Հապավումը բառաբարդման եղանակներից մեկն է, որով նոր բառեր են կազմվում բառակապակցության կամ բարդությունների բաղադրիչների հապավված, կրճատված մասերից:

Հիմնականում բառակապակցություններից կամ բառակապակցական անվանումներից են կազմվում հապավումներ, սակայն առկա են նաև համադրական բարդությունների բաղադրիչների կրճատմամբ կազմված համեմատաբար քիչ թվով հապավումներ, ինչպես՝ հիդրոէլեկտրակայան (հէկ), կազմաթողական (կազմակերպամեթոդական), ժողտնտեսական (ժողովրդատնտեսական) և այլն:

Հապավումներին հայ իրականության մեջ առավել խորությամբ անդրադարձել է լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանը: Նախ հրատարակել է առանձին ուսումնասիրություն¹, ապա և բառարան, որն ընդգրկում է բոլոր տեսակի հապավումներ, որոնց ընդհանուր

¹ **Ա. Մարգարյան**, Հայերենի հապավումները և նրանց առանձնահատկությունները, Ա. հ., Ե., 1977:

թիվը հասնում է 4000-ի: Դրանց մեջ առկա են նաև զգալի թվով հնաբան հապավումներ, որոնք նշվել են աստղանիշով: Բառարանում տեղ գտած և այն ժամանակվա համար գործուն հապավումների ճնշող մեծամասնությունն էլ իր հերթին հնաբանություն է արդի լեզվափոխում: Քանի որ հապավումների արտահայտած հասկացություններից շատերը դեռևս արդիական են, ուստի և ԱՄՇԲ-ում ընդգրկված որոշ հապավումներ լայն գործածություն ունեն նաև այսօր:

Մինչ վերոհիշյալ բառարանը մեծ թվով հապավումներ են արձանագրվել այլ բառարաններում: Ա. Մարգարյանը օգտագործել է մի քանիսը, բայց և Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից»² չի օգտվել, չնայած որ վերջինս մի քանի տարի առաջ արդեն տպված է եղել: Հետևաբար ԱՄՇԲ-ում տեղ չեն գտել ԱՀԲԲ-ում արձանագրված մեծ թվով հապավումներ:

Ա. Սուքիասյանը «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ հապավումներ կազմելու վերաբերյալ գրում է. «Հապավումների, իբրև նոր բառերի ստեղծման եղանակի, աշխուժացումն ու տարածումը սկսվում է հատկապես 20-րդ դարի երկրորդ տասնամյակից և շարունակվում առայսօր», ապա ավելացնում. «Նրանց տարածումը պայմանավորված է ինչպես գործնական պահանջների (տեղի, ժամանակի խնայողության), այնպես էլ հասարակական-քաղաքական գործունեերով, գիտատեխնիկական առաջընթացով»³: Հիրավի, այսօր էլ մեծ թվով հապավական բարդություններ են կազմվում՝ նշված պահանջներից ու հանգամանքներից ելնելով:

² **Ա. Մարգարյան**, Հայոց լեզվի հապավումների բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1979 (այսուհետև՝ ԱՄՇԲ):

³ **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976, (այսուհետև՝ ԱՀԲԲ):

⁴ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1999, էջ 292:

Վերջին շրջանում գործածվող հարյուրավոր հապավումներ տեղ են գտել հետևյալ բառարաններում՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի կազմած «Նոր բառեր» (Ա-Ը պրակներ) բառարանաշարքում⁵ և Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում»⁶: Քիչ թվով նորօրյա հապավումներ արձանագրվել են նաև Փ. Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարանում»⁷ և «Հայերենի ուղղագրական նոր բառարանում»⁸, Ա. և Ք. Սուքիասյանների «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանում»⁹:

Ստորև քննության են առնվում հիշատակված բառարաններից և օգտագործված մի քանի ուսումնասիրություններից քաղված խառը հապավումները, անհրաժեշտաբար նաև ժամանակներս լայն տարածում գտած, սակայն նշված աշխատություններում դեռևս տեղ չգտած մի քանի հապավումներ:

Հայերենի հապավումների տեսակները: ԱՄՀԲ-ի նախաբանում՝ «Բառարանի կառուցվածքը» վերնագրի ներքո Ա. Մարգարյանը առանձնացնում է հապավումների հետևյալ չորս տեսակները՝ *տառային, վանկային, վանկաբառային* և *խառը*¹⁰: Այստեղից կարելի է հասկանալ, որ *վանկաբառայինը* համարում է առանձին տեսակ և ոչ թե *խառը* հապավման ենթատեսակներից մեկը: Վերջինիս մեջ էլ

⁵ **Նոր բառեր**, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ա-Ը պրակներ, Ե., 2015-2023 թթ.:

⁶ **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատ., Ե., 2002, (այսուհետև՝ ՍԷԲ):

⁷ **Փ. Մեյթիխանյան**, Նոր բառերի բացատրական բառարան, «Փյունիկ» հրատ., Ե., 1996:

⁸ **Փ. Մեյթիխանյան**, Հայերենի ուղղագրական նոր բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2013:

⁹ **Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան**, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, «Մակմիլան Արմենիա» հրատ., Ե., 2002, (այսուհետև՝ ՍՈՒԲ):

¹⁰ Տե՛ս **ԱՄՀԲ**, էջ 7: Քանի որ բառարանը ժամանակագրորեն հաջորդում է ուսումնասիրությանը, ուստի նշվածի համեմատ ենք ներկայացնում հեղինակի մոտենումները:

առանձնացնում է *վանկատառային, բառատառային* և *տառաբառային* ենթատեսակներ: Ինչպես կարելի է նկատել, վերջին երկու տեսակներն ընդհանուր առմամբ նույն երևույթն են ներկայացնում, միայն թե համապատասխան բաղադրիչների շարադասությունն է տարբեր: Այս նույն մոտեցմամբ կարող ենք տարբերել նաև *բառավանկային* ենթատեսակը, ինչպես՝ *նորահրատ* «նոր հրատարակված»:

Ա. Սուքիասյանը «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ՝ «Հապավական բաղադրությունների տեսակները» վերնագրի ներքո առանձնացնում է հետևյալ չորս տեսակները՝ *տառային, վանկային, վանկատառային* և *վանկաբառային*¹¹: Այս դեպքում էլ հիշատակություն չկա *տառաբառային* հապավումների մասին: Առանձին խոսելով հապավական բաղադրությունների առանձնահատկություններից՝ ինչ-որ տեղ հապավման մի տեսակ է համարում *բառային* հապավումը. «Բառակազմական որոշակի արժեք են ներկայացնում և հապավման առանձին տեսակ են համարվում, այսպես կոչված, բառային հապավումները»¹²: Վերջիններս, ըստ լեզվաբանի, այն հապավումներն են, որոնց հապավված բաղադրիչը իր բառային տեսքը չի կորցնում, միայն թե կրճատվում են ածանցներն ու վերջավորությունները: Լեզվաբանը որպես այդպիսիք ներկայացնում է հետևյալ օրինակները՝ *գյուղնախարարություն, ծնողկոմիտե, անտառարդյունաբերություն, կենցաղկոմբինատ, կազմխորհուրդ, մեթոդկարհնետ*¹³: Կարելի է նկատել, որ նրջված օրինակներից երկուսում (գյուղնախարարություն – գյուղատնտեսության նախարարություն, կազմխորհուրդ – կազմակերպական խորհուրդ) հապավվել են ոչ միայն ածանցներ, այլև

¹¹ Նշվ. աշխ., էջ 293:

¹² Նշվ. աշխ., էջ 294:

¹³ Նույն տեղում:

արմատներ, ուստի և դրանք հապավում համարելը անառարկելի է: Մինչդեռ մյուսների դեպքում նույնիսկ տարակուսելի է: Լեզվաբանն իրավացիորեն նկատում է, որ այդպիսի հապավումը մոտենում է իսկական բարդությանը¹⁴: Իրապես հաճախ դժվար է տարբերակել վանկաբառային հապավումներն ու իսկական բարդությունները: Այդ պատճառով էլ բառարաններում և տարբեր աշխատություններում նույն բառը մերթ դիտվում է որպես հապավական բարդություն, մերթ որպես սովորական բարդություն: Օրինակ, ԱՄՇԲ-ի բառացանկից կարելի է առանձնացնել մի շարք բառեր, որոնք, կարծում ենք, ճիշտ չէ հապավական բարդություն համարելը: Այսպես՝ բեմարվեստ – բեմական արվեստ, շտաբկայան – շտաբի կայան, կրթօջախ – կրթության օջախ, հանքուղի – հանքի ուղի, մարտընկեր – մարտական ընկեր, մարզկենտրոն – մարզային կենտրոն և այլն: Նկատենք, որ բեմարվեստ-ը կարելի է հասկանալ նաև՝ բեմի արվեստ, մարտընկեր-ը՝ մարտի ընկեր, մարզկենտրոն-ը՝ մարզի կենտրոն, շտաբկայան-ը հայտնի է նաև հողակապով տարբերակով (ԱՀԲԲ): Նույն սկզբունքով կարող ենք նմանատիպ կազմություն ունեցող անթիվ-անհամար բառեր նույնպես համարել հապավական բարդություններ, ինչպես՝ մարտարվեստ, գրչօջախ, ծաղկաման, ռազմընկեր և այլն:

Ուրիշ դեպքերում հապավված բաղադրիչները ոչ թե բառարմատներ են, այլ արմատի մասեր, ուստի և որևէ իմաստ չեն արտահայտում, ասել է թե՛ նշվածները կորցրել են իրենց բառային տեսքը: Վերջիններիս է վերաբերում Ֆ. Խլղաթյանի հետևյալ նկատառումը. «Հապավման և բառաբարդման հիմնական տարբերու-

¹⁴ Նույն տեղում:

թյունն այն է, որ հապավումների բաղադրիչները կարող են իմաստակիր չլինել, ի տարբերություն բարդ բառի բաղադրիչների, որոնք միշտ իմաստակիր են»¹⁵:

Ֆ. Խլղաթյանը հայերենում գործածվող հապավումները ներկայացնում է ըստ հինգ տեսակների: Հետևյալ չորսին՝ *տառային*, *վանկային*, *վանկաբառային* և *տառաբառային*, ավելացնում է օտար հապավումները՝ նշելով դրանցից մի քանի տառայինի օրինակ, որոնք նախորդներին, բնականաբար, ոչ թե տեսակով հակադրվում են, այլ միայն օտար անվանումների սկզբնատառերով են, այսպես՝ ՆԱՏՕ, ՏԱՄՍ: Փաստորեն, ինչպես նկատվում է, այս անգամ էլ անտեսվել է *վանկատառային* տեսակը, որը խիստ հազվադեպ է դրսևորվում¹⁶:

Արդի շրջանում ընդունված է հապավումները բաժանել երեք հիմնական խմբի՝ *տառային*, *վանկային* և *խառը*: Վերջինիս մեջ ներառվում է նաև *վանկաբառային* տեսակը, որը մինչ այդ, ինչպես վերը նկատեցինք, *խառը* տիպից երբեմն առանձնացվում էր:

Հայերենի խառը հապավումները: Ահա թե ինչպես է սահմանվում *խառը* հապավումը Յու. Ավետիսյանի աշխատության մեջ. «Խառն են այն հապավումները, որոնք մասամբ տառային են, մասամբ՝ վանկային, կամ էլ վերջին բաղադրիչն ամբողջական բառ է»¹⁷: Այսպիսով, խառը հապավումները վանկերի և բառերի, վանկերի և տառերի, տառերի և բառերի համադրությամբ հապավումներն են: Ըստ այդմ էլ լինում են՝ *վանկաբառային*, *վանկատառային* և *տառաբառային*: Ինչպես վերը նկատեցինք, ոմանք դասակարգելիս նկատի

¹⁵ Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, «Զանգակ-97» հրատ., Ե., 2009, էջ 282:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Երևանի պետական համալսարանի հրատ., Ե., 2014, էջ 94:

են առնում նաև հիշատակված միավորների շարադասությունը: Այսպիսով կարող են լինել նաև՝ *բառավանկային*, *բառատառային*: Սակայն նախորդ անվանումների ներքո կարելի է հասկանալ նաև վերջիններս:

Տառային և *վանկային* որոշ հապավումներ զուգահեռ դրսևորվում են խառը տարբերակներով, ընդ որում՝ առաջինը՝ *տառաբառային*, երկրորդը՝ *վանկաբառային* զուգահեռ տարբերակով: Այսպես՝ *տառային* // *տառաբառային*՝ ԿԳՄՄՆ – ԿԳՄՄ նախարարություն, ՀՀԻՄ – ՀՀ Իրավաբանների միություն և այլն, *վանկային* // *վանկաբառային*՝ աշխղեկ // աշխղեկավար – աշխատանքի ղեկավար, զինղեկ // զինղեկավար – զինվորական ղեկավար, քաղղեկ // քաղղեկավար – քաղաքական ղեկավար, գիտխորհ // գիտխորհուրդ – գիտական խորհուրդ, մանկխորհ // մանկխորհուրդ – մանկավարժական խորհուրդ, զինկում // զինկումիսար – զինվորական կումիսար, զինկում // զինկումատ // զինկումիսարիատ – զինվորական կումիսարիատ, սոցապ // սոցապահովագրություն – սոցիալական ապահովագրություն, բուժֆակ // բուժֆակուլտետ – բժշկական ֆակուլտետ, պետատ // պետառևտուր – պետական առևտուր և այլն:

Վանկային տերմինին զուգահեռ գործածվում է նաև *բառամասային* տերմինը՝ ելնելով նրանից, որ հաճախ հապավված բաղադրիչը երկու և ավելի վանկ ունի: Այդ անվանումը առավել ճիշտ է բնութագրում իրողությունը, սակայն խառը հապավումների ենթատեսակների անվանումները երկար ու անհարմար կստացվեն, ինչպես՝ *բառամասաբառային*, *բառամասատառային*®:

Վանկաբառային - ավտոտեխսպասարկում – ավտոմոբիլների տեխնիկական սպասարկում, բնակմակերես – բնակելի մակերես, միջբանկ - միջազգային բանկ, ուստարի – ուսումնական տարի,

¹⁸ Տե՛ս **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1987, էջ 252-253:

քաղբանտարկյալ – քաղաքական բանտարկյալ, քիմաքրում – քիմիական մաքրում, ֆիննախարար - ֆիննասների նախարար և այլն:

Վանկաբառային հապավումներում վանկը կամ կրճատ մասը (բառամասը) կարող է տարբեր շարադասություն ունենալ, այսպես՝ 1. առաջին բաղադրիչը վանկ, ինչպես վերոհիշյալ օրինակներն են. հիմնականում տարածված է այս տեսակը, մյուսները խիստ սակավ են, 2. վերջին բաղադրիչը վանկ՝ *Արփասեսանջին, նորահրատ* - նոր հրատարակված, 3. միջնաբաղադրիչը վանկ՝ *անտառարդտնտեսություն, մակրոէկոհամակարգ, ջրակոհամակարգ*, 4. ծայրաբաղադրիչները վանկ (միջնաբաղադրիչը բառ)՝ *Հայծխախոտարդ* – Հայաստանի ծխախոտի արդյունաբերություն և այլն:

Վանկատառային - *զինապահ* - զինձառայողների ապահովագրության ազգային հիմնադրամ (զին+ապ+ա+h): Ա. Սուքիասյանը վերոհիշյալ աշխատության մեջ որպես նշված տեսակին բնորոշ օրինակներ առանձնացրել է՝ *ՀամԼ ԿԵՄ* (համամիութենական լենինյան կոմունիստական-երիտասարդական միություն) և *ՀՀ կենտրոնական վարչություն*¹⁹, որը, սակայն, տառայինի և վանկաբառայինի հարադրությամբ կազմություն է, հետևաբար կարելի է անվանել **տառավանկաբառային**: Այդպիսի օրինակ է նաև՝ ՀՀ արտոգործնախարարություն:

Տառաբառային - Գյումուշեկ – Գյումուշի հիդրոէլեկտրակայան, Ձորահեկ – Ձորագետի հիդրոէլեկտրակայան, Սևանհեկ – Սևանի հիդրոէլեկտրակայան, Երևանջեկ – Երևանի ջերմաէլեկտրակայան, ԱՄՆ դոլար, ՀՀ Սահմանադրություն և այլն:

Ոմանք այն թյուր կարծիքին են, թե հապավումները միայն գոյականներ են, սակայն, ինչպես կարելի է նկատել, կազմվել են

¹⁹ Նշվ. աշխ., 293:

նան ածական հապավումներ: Բոլոր տեսակի հապավումներն էլ իրենց հերթին կարող են մասնակցել նոր բառերի կազմությանը՝ հանդիսանալով թե՛ ածանցման և թե՛ բառաբարդման հիմք: Հարց է ծագում՝ նշվածները համարե՞լ հապավում, թե՞ չհամարել: Կարծում ենք, որ նախատիպ հապավումներից կազմված բոլոր բառերն էլ իրենց հերթին հապավումներ են: Տառային և վանկային հապավումներից բառաբարդումները համապատասխանաբար հարում են խառը հապավումների *տառաբառային* և *վանկաբառային* տեսակներին: Իսկ ի՞նչ անվանում տալ նույն հապավումներից ածանցմամբ կազմություններին, գուցե *տառածանցային* և *վանկածանցային*՝ որպես խառը հապավումների ուրույն տեսակներ:

Տառային հապավումներից կազմված ածանցավոր և բարդ բառեր: Տառային հապավումները սովորական բառարմատների նման կարող են հանդիսանալ որպես բառակազմական բաղադրիչ: Ահա այսպիսի դեպքերում է, որ առաջանում են գրության տարբերություններ, որոնք կանոնարկման կարիք ունեն: ՍՈՒԲ-ի վերջնամասում անդրադարձ կա նաև հապավումների ուղղագրությանը²⁰: Սովորաբար մեծատառերով գրվող տառային հապավումներից առանձնացվում են հասարակ բառերի վերածված հապավումները, որոնք գրվում են փոքրատառով՝ բուհ, աէկ, հէկ, ջէկ, զագու (ռուս.՝ загс – запись актов гражданского состояния): Վերջիններս նոր բառերի կազմության հիմք են դառնում, ինչպես՝ բուհ - բուհական, բազմաբուհ, ներբուհական, համաբուհական, միջբուհական, հետբուհական, զագու – զագսավորվել, զագսավորում, հէկ – Տաթևհէկ, Քանաքեռհէկ, ջէկ - Երևանջէկ և այլն: Գրավոր աղբյուրներում ի հայտ են գալիս նաև վերջինների ԱԷԿ, ՋԷԿ, ՀԷԿ գրությունները, նույնիսկ հաճախ բառամիջում և բառավերջում, սակայն

²⁰ Տե՛ս ՍՈՒԲ, էջ 404:

արդի հայերենում ընդունելի չեն, քանի որ այդ հապավումները ձեռք են բերել սովորական բառերի արժեք:

Այսպիսով, հարց է առաջանում, թե ինչպես վարվել մյուս տառային հապավումներից կազմված ածանցավոր և բարդ բառերի գրության դեպքում, երբ որ դրսևորվում և գրավոր տարբեր աղբյուրներից ելնելով՝ անգամ բառարանային գրանցում են ստանում տարբեր գրություններով: Այսպես՝ մի կողմից՝ ԱԺՄ (Ազգային ժողովրդավարական միություն) - ԱԺՄ-ական, ԱԺՄակենտրոն, ԱԻՄ (Ազգային ինքնորոշում միավորում) - ԱԻՄ-ական, ԱԻՄածին, ԱՊՀ (Անկախ պետությունների համագործակցություն) - համաԱՊՀ-ական, ԲՀԿ («Բարգավաճ Հայաստան» կուսակցություն) - ԲՀԿ-ական // ԲՀԿական, ՄԱՀ (Միջազգային արժույթային հիմնադրամ) - ՄԱՀատոն²¹, ՆԱՏՕ (North Atlantic Treaty Organization - Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն) - համաՆԱՏՕ-ական, ՆԱՏՕանման, ՔՊ (Քաղաքացիական պայմանագիր /կուսակցություն/) - ՔՊ-ական // ՔՊական, մյուս կողմից՝ աիմական կամ իմական, իմրնտրագանգված, ապհածին, ներապհական, հականատոյական, բիկական, քպական [քըպըական] և այլն: Կարծում ենք, որ հանձնարարելի են վերջին գրությունները²², քանի որ բաղադրությունների կազմում նշված տառային հապավումները կորցնում են իրենց բուն արժեքը՝ հիմք տալով սովորական հասարակ անունների կազմության: Բացի դրանից՝ միաժամանակ կարծում ենք, որ փոքրատառից հետո մեծատառի գրությունը պետք է բոլոր դեպքերում բացառել:

²¹ Հապավում նշումով տրված է ՄԷԲ-ում:

²² Բհարկե կարելի է որոշ արբագրություն կատարել, օրինակ, նատո գրության փոխարեն գրել նատո:

Վանկային հապավումներից կազմված ածանցավոր բառեր՝ զինկումական, աշխղեկային, աշխղեկություն, զինղեկություն, ուսմասավարություն և այլն:

Խառը հապավումները կարող են իրենց հերթին լինել նաև հատուկ անուններ, ուստի գրվում են մեծատառով, ինչպես՝ Պետխորհուրդ, Պետդումա: Սակայն Ա. Սուքիասյանի խոսքով մեծատառով է գրվում նաև «հասարակ անվան գործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչի առաջին տառը՝ Հայկինո, Արմենֆիլմ, Հայոսկի»²³: Կարծում ենք, որ նման ձևակերպումը տեղին չէ: Եթե մեծատառով են գրվում, ուրեմն հատուկ անուններ են: Իսկ եթե վերածվել են հասարակ անունների, պետք է գրել փոքրատառով: Հայկինո բառը ԱՄՀԲ-ում բացատրված է «հայկական կինո» և ոչ թե «Հայաստանի կինո», բայց և բնագրային վկայության մեջ, որպես հատուկ անուն, մեծատառով է գրված:

Է. Աղայանի ԱՀԲԲ-ի գլխաբառերի ցանկում առանձնաբար տրվում են նաև որպես բարդությունների հապավված բաղադրիչ հանդիսացող միավորները՝ կիրառական իմաստների նշումով, ինչպես՝ արդ - «արդյունաբերական, արդյունաբերություն» նշ., գյուղ - «գյուղական, գյուղացիական, գյուղատնտեսական» նշ., էլ - «հապավում էլեկտրական բառի», ժող - «հապավում ժողովրդական բառի» և այլն: Բացի նշվածից, թեև ոչ բոլոր դեպքերում, բայց և բառացանկում տրված հապավական բարդությունների հապավում լինելը հիմնականում նշվում է: Մինչդեռ *էլադաց, շինհրապարակ* և այլ բառերի դեպքում հիշատակված բառարանում այդպիսի նշում չկա: Ուրիշ բառարաններում ևս կարելի է նկատել նույն իրողությունը: Որոշ հապավումների հապավում լինելը նշվում է, մի շարք դեպքերում չի նշվում, հաճախ նույնիսկ հաջորդաբար տրված և

²³ Տե՛ս ՍՈՒԲ, էջ 404,

նույն հապավված բաղադրիչով բառերի դեպքում մերթ նշվում է, մերթ չի նշվում: Նշված երևույթը ինչ-որ չափով պայմանավորված է հապավական բարդությունները սովորական բարդություններից տարբերակելու որոշ դժվարություններով:

ԱՄՀԲ-ի բուն հապավումների շարքում տրված են նաև դրանցով բաղադրված բառերը, չնայած որ հեղինակը դրանք չի համարում հապավում²⁴: ԱՀԲԲ-ում և այլ բառարաններում հապավական բարդություններից ածանցամբ կամ բառաբարդամբ կազմված բառերը նույնպես սովորաբար չեն դիտվում կամ չեն նշվում որպես հապավումներ, չնայած որ առանձին դեպքերում այդպիսի նշումներ ևս հանդիպում են:

Ինչպես և վերը նշել ենք, խառը հապավումների մեջ անհամեմատ մեծ թիվ են կազմում *վանկաբառային* հապավումները: Ահա և հայերենում տարածված *վանկաբառային* հապավումներ՝ ըստ հապավված բաղադրիչի.

Աշխ // **աշխատ** – ԱՀԲԲ-ում *աշխ*-ը որպես բառերի հապավական բաղադրիչ երկու անգամ է նշվել՝ նախ «աշխատանքի, աշխատանքային» իմաստով, ապա և՛ «աշխատողներ»: Նշված բառարանում առկա են՝ աշխգրքույկ, աշխղեկ (որից և՛ աշխղեկություն), աշխօր (որից և՛ աշխօրային), որոնցում առկա է առաջին իմաստը: *Աշխատ*-ի դեպքում նույնպիսի նշում չկա, ոչ էլ դրանով կազմություններն են նշվել որպես հապավական բարդություններ, թեև ԱՄՀԲ-ում որպես հապավական բարդություններ տրված են նաև՝ աշխատուժ – աշխատանքային ուժ, աշխատօր – աշխատանքային օր: Վերջիններին է հարում նաև ԱՀԲԲ-ում տեղ գտած *աշխատընկեր* բառը: Կարելի է կարծել, որ Է. Ադայանը այդ օրինակները չի համարում հապավական բարդություններ:

²⁴ Տե՛ս ԱՄՀԲ, էջ 7:

Արհ (արհեստակցական) – արհմիություն (որից և՛ արհմիութենական), արհբյուրո – արհեստակցական /միության/ բյուրո, արհգիծ – արհմիութենական գիծ, արհլիագոր – արհեստակցական /միության/ լիագոր, արհկոմ - արհեստակցական /միության/ կոմիտե, արհմխորհուրդ²⁵ - արհեստակցական /միության/ խորհուրդ:

Բուժ (բժշկական, բուժական) - բուժանձնակազմ, բուժաշխատող, բուժգիծ, բուժգործիքներ, բուժգործողություն, բուժեղանակ, բուժզննություն, բուժզննում, բուժինստիտուտ, բուժճառայող, բուժճառայություն, բուժկայան, բուժկենտրոն, բուժկետ, բուժհաստատություն, բուժհիմնարկ, բուժմիավորում, բուժջոկատ, բուժսանիտարական, բուժսանմաս, բուժսարքավորում, բուժսպասարկում, բուժստուգում, բուժվաշտ, բուժվարկած, բուժքույր, բուժքնություն, բուժօգնություն, բուժօջախ և այլն:

Բնակ (բնակարանային, բնակելի) – բնակապահովում, բնակնպաստ, բնակբաժին, բնակընկերություն, բնակթաղամաս, բնակկառավարիչ, բնակկառավարչություն, բնակկոռպերացիա, բնակմակերես, բնակշինարարական, բնակշինարարություն, բնակվարձ, բնակվարձակալ, բնակվարչություն, բնակտարածություն, բնակտնտեսություն, բնակֆոնդ և այլն:

Գեղ (գեղարվեստի, գեղարվեստական) – ԱՀԲԲ-ում նշված չէ որպես հապավված բաղադրիչ, ոչ էլ դրանով կազմված հապավական բարդություններ կան բառացանկում: ԱՄՀԲ-ում արձանագրվել են՝ գեղխորհուրդ – գեղարվեստական խորհուրդ, գեղֆոնդ –

²⁵ Ինչպես կարելի է նկատել, նախորդ կազմություններում վերցվել է *արհմիություն* բառի միայն *արհ* հատվածը, իսկ **ՄԷԲ**-ում տեղ գտած այս բառում առկա է *արհմ*, ուստի և այն ինչ-որ տեղ կարելի է համարել նաև *վանկատառաբառային* հապավում: Հիշենք, որ վերը տրվել են նաև *տառավանկաբառայինի* օրինակներ, որոնք նշվածից տարբերվում են համապատասխան միավորների շարադասությամբ:

գեղարվեստի ֆոնդ, նաև հետևյալ վանկային հապավումը՝ գեղմաս-
վար – գեղարվեստական մասի վարիչ: ՄԷԲ-ում էլ տեղ են գտել՝
գեղձևավորում – գեղարվեստական ձևավորում, գեղֆիլմ –
գեղարվեստական ֆիլմ:

Գիտ (գիտական) – գիտաշխատակից, գիտաշխատող, գիտաշ-
խատություն, գիտաստիճան, գիտարշավ, գիտարշավախումբ, գի-
տարվեստ, գիտխմբագրություն, գիտխորհուրդ, գիտքարտուղար և
այլն:

Գյուղ (գյուղական, գյուղատնտեսական) - գյուղակադեմիա,
գյուղբաժին, գյուղգործիք, գյուղթղթակից, գյուղինստիտուտ, գյուղ-
խորհուրդ, գյուղմթերք, գյուղուլորտ, գյուղտեխնիկա և այլն:

Զին (զինվորական) – զինանձնակազմ, զինարշավ, զինբժիշկ,
զինգործողություն, զինգրքույկ, զինդատախազ, զիներթ, զինթղթա-
կից, զինթոշակառու, զինինժեներ, զինխմբավորում, զինծառայող,
զինծառայություն, զինկայան, զինկոմիսարիատ, զինհանդերձանք,
զինհաշմանդամ, զինհաշվառում, զինհրամանատարական, զինդե-
կավար, զինմասնագետ, զինմասնագիտություն, զինպատրաստա-
կանություն, զինպատրաստություն, զինվարժահավաք, զինվար-
ժություն, զինուժ, զինուսուցում, զինքաղաշխատող, զինօգնություն
և այլն:

Ժող (ժողովրդական) – ժողատենակալ, ժողգործիք, ժողդա-
տավոր, ժողդատարան, ժողերգիչ, ժողթատրոն, ժողկրթբաժին, ժող-
կրթություն, ժողճակատ, ժողպատգամավոր, ժողսպառում, ժող-
ստեղծագործություն, ժողվերահսկողություն, ժողտնտեսական,
ժողտնտեսություն, ժողքննիչ և այլն:

Կուս (կուսակցական, կուսակցության) - կուսակտիվ, կուսան-
դամ, կուսանվանակարգ, կուսաշխատող, կուսբյուրո, կուսբյու-
րոկրատ, կուսգործիչ, կուսժողով, կուսծրագիր, կուսհամագումար,

կուսդեկավար, կուսամարմին, կուստնտակտիվ, կուստոմս, կուս-
քարտուղար և այլն:

Կազմ (կազմակերպական կամ կազմակերպչական) – կազմ-
աշխատող, կազմբաժին, կազմբյուրո, կազմդաստիարակչական,
կազմխորհուրդ, կազմկոմիտե, կազմհրահանգիչ, կազմհրահանգ-
չական, կազմմեթոդական և այլն:

Շին (շինարարական) – շինաղբ, շինաշխատանք, շինաշխու-
ժություն, շինառարկա, շինարվեստ, շինգրասենյակ, շինկազմա-
կերպություն, շինհրապարակ, շինմաս, շինմոնտաժ, շինմոնտաժա-
յին, շինջոկատ, շինվարչություն, շինվերանորոգում, շինտարածք,
շինտրեստ, շինօբյեկտ և այլն:

Պետ (պետական, պետության) - պետադմինիստրացիա,
պետանվտանգություն, պետաշխատող, պետաջակցություն, պետ-
ավիաճառայություն, պետավտոտեսչություն, պետապարատ, պետ-
արարողակարգ, պետարգելոց, պետաուղիտ, պետբանկ, պետ-
գանձագող, պետգույք, պետէներգահամակարգ, պետխորհուրդ,
պետճառայող, պետկառույց, պետկոմիտե, պետհամալսարան,
պետհամարանիշ, պետձեռնարկություն, պետդեկավար, պետ-
ճարտշինվերանորոգում, պետմատակարարում, պետշինարարու-
թյուն, պետշինվերահսկողություն, պետպահուստ, պետպատվեր,
պետպարտք, պետռեզիստր, պետստանդարտ, պետվաճառք, պետ-
տնտեսություն, պետքարտուղար, պետքարտուղարություն, պետ-
օգնություն, պետօժանդակություն, պետֆիլիարմոնիա, պետ-
ֆիլմադարան, պետֆիլմֆոնդ, պետֆինանս և այլն:

Քաղ – 1. *քաղաքային* – քաղելեկտրացանց, քաղժողկրթբաժին,
քաղմաս, քաղցանց, 2. *քաղաքացիական* - քաղապաստան, քաղ-
ավիացիա, քաղճառայություն, քաղիայց, քաղտեղեկանք, քաղ-
պաշտպանություն, 3. *քաղաքական*՝ քաղաշխատանք, քաղաշխա-

տող, քաղբաժին, քաղբանտարկյալ, քաղբյուրո, քաղգրագիտություն, քաղգործիչ, քաղդաստիարակություն, քաղդաստիարակչական, քաղդպրոց, քաղգրույց, քաղխմբագիր, քաղխմբագրություն, քաղխմբակ, քաղկազմակերպիչ, քաղկազմակերպություն, քաղկալանավոր, քաղհալածյալ, քաղմարմին, քաղշահարկում, քաղվարչություն, քաղվտարանդի, քաղտեխնոլոգ, քաղտեսաբան, քաղտնտեսություն և այլն:

Արդի հայերենում հատկապես լայն տարածում են ստացել օտար բաղադրիչներով վանկաբառային հապավումները:

Ավտո առաջնաբաղադրիչը բառերում արտահայտում է «ինքնուրույն» (ավտոբարձիչ, ավտոծրագրավորում, ավտոմեքենա, ավտոսահնակ և այլն) և «ավտոմեքենայի» իմաստները: Առաջինները, ի տարբերություն երկրորդների, հապավական բարդություններ չեն: Բայց և պետք է նաև նկատել, որ հայերենում *ավտո* բառը լայնորեն գործածվում է հենց «ավտոմոբիլ, ավտոմեքենա» իմաստով, ուստի և կարելի է նաև նշվածով կազմությունները չհամարել հապավական բարդություն²⁶: Օրինակներ՝ ավտոապահովագրություն, ավտոերթ, ավտոէլեկտրիկ, ավտոթաղամաս, ավտոթիթեղագործ, ավտոլիցքավորում, ավտոլվացող, ավտոլցակայան, ավտոծառայություն, ավտոկայանատեղի, ավտոկենտրոն, ավտոկշեռք, ավտոհամարանիշ, ավտոհսկա (ավտոմեքենա արտադրող խոշոր ձեռնարկություն), ավտոյուղ, ավտոներկ, ավտոներկրող, ավտոներմուծող, ավտոշոու, ավտոշուկա, ավտոպայթեցում, ավտոսերվիս,

²⁶ *Ավտո* բառը է. Աղայանի ԱՀԲԲ-ում բացատրված է երեք իմաստով՝ 1. ավտո «ավտոմոբիլ, ավտոմեքենա», 2. հապավված բարդությունների բաղադրիչ՝ ավտոմոբիլային, ավտոմոբիլ նշ., 3. փոխառյալ բառերի առաջին բաղադրիչ ինքնա-նշ.: Մակայն համապատասխան կազմություններից որևէ մեկի մոտ նշված չէ հապավում լինելը: Լեզվի ինստիտուտի կազմած «Նոր բառեր»-ի պրակներում, ՄԷԲ-ում և այլ բառարաններում նույնպես *ավտո*-ով բաղադրված ոչ մի բառի դեպքում հապավում նշումը չկա:

ավտոսեփականատեր, ավտոսպասարկում, ավտովարկ, ավտովարկավորում, ավտովարում, ավտոտեր, ավտոցուցահանդես, ավտոփորձագետ և այլն:

Ագրո (ագրոնոմիական) – ագրոբազա, ագրոբարելավում, ագրոգիտասփյուռ, ագրոդասընթաց, ագրոդպրոց, ագրոժամկետ, ագրոլանդշաֆտ, ագրոլրատու, ագրոխմբակ, ագրոկենսաբազմազանություն, ագրոհատված, ագրոմիջոցառում, ագրոշուկա, ագրոպարենային, ագրովերամշակող, ագրովերամշակում, ագրոտեխնիկ, ագրոտեխնիկա, ագրոտնտեսական, ագրոտուրիզմ, ագրոքիմիկատ և այլն:

Եվրա (եվրոպական կամ Եվրոպայի) - եվրաստցացում, եվրաարժեք, եվրագավաթ, եվրագավաթային, եվրագնոստիկ, եվրագոտի, եվրադատարան, եվրաեռյակ, եվրաընտանիք, եվրաժողովրդավարություն, եվրաինտեգրացիա, եվրաինտեգրացում, եվրախմբում, Եվրախորհրդարան, Եվրախորհուրդ, եվրահանձնակատար, եվրահեռանկար, Եվրամիություն, եվրաշուկա, եվրաչափանիշ, եվրապաշտոնյա, եվրապատգամավոր, եվրաջատագով, եվրասկեպտիկ, եվրավերահսկողություն, եվրավերանորոգել և այլն: Ձուգահեռ գործածվում են, ապա և բառարանագրվում նաև **եվրո** բաղադրիչով կազմություններ՝ եվրոաղբավայր, եվրոարժույթ, եվրոբանկ, եվրոդագաղ, եվրոդիտորդ, եվրոերազանք, եվրոխաղ, եվրոկոմիսար, եվրոհամակարգ, եվրոհամայնք, եվրոհրթիռ, եվրոշենք և այլն, սակայն դրանք հայերենում հանձնարարելի չեն²⁷:

ԷԼ (էլեկտրական, էլեկտրականության, էլեկտրոնային) – էլադաց, էլեներգիա, էլկայան, էլկապ, էլիսկիչ, էլցանց, էլփոստ և այլն:

²⁷Տե՛ս **Հ. Գալստյան**, Ճիշտը և սխալը, «Զանգակ-97» հրատ., Ե., 2007, էջ 41:

Էկո (Էկոլոգիական) - Էկոակտիվիստ, Էկոակումբ, Էկոսահաբեկիչ, Էկոաղբաման, Էկոաղբարկղ, Էկոաղետ, Էկոայգի, Էկոաշխարհ, Էկոարշավ, Էկոբրիկետ, Էկոգաղութացում, Էկոգորգ, Էկոգրիչ, Էկոդասընթաց, Էկոդատախազություն, Էկոգարդ, Էկոլարվածություն, Էկոկաշի, Էկոկենտրոն, Էկոհամակարգ, Էկոհավկիթ, Էկոհեռախոս, Էկոմարգ, Էկոմեքենա, Էկոմթերք, Էկոմոտեցում, Էկոոստիկան, Էկոչափանիշ, Էկոռեստորան, Էկովառելիք, Էկոտուն և այլն:

Կիբեռ (կիբեռնետիկայի - SS /տեղեկատվական տեխնոլոգիաների/ ոլորտի) - կիբեռահաբեկիչ, կիբեռահաբեկչություն, կիբեռանվտանգություն, կիբեռգրոհ, կիբեռդաշտ, կիբեռենթակառուցվածք, կիբեռգորամիավորում, կիբեռհանցագործ, կիբեռհանցագործություն, կիբեռհանցավորություն, կիբեռհասկացություն, կիբեռհարթակ, կիբեռհարձակում, կիբեռճգնաժամ, կիբեռմարզիկ, կիբեռոլորտ, կիբեռոստիկանություն, կիբեռպաշտպանվածություն, կիբեռպատերազմ, կիբեռսպառնալիք, կիբեռվտանգ, կիբեռտարածություն, կիբեռքաղաքականություն և այլն:

Պրոֆ – ԱՀԲԲ-ում նշված է որպես բարդությունների փոխառյալ բաղադրիչ՝ 1. պրոֆեսիոնալ և 2. արհմիութենական նշանակություններով: Թեև նշված չէ որպես հասպավական բաղադրիչ, բայց հասկացվում է, բացի դրանից՝ բառացանկի բառերի կողքին առկա է *հասպավում* նշումը: Օրինակներ՝ պրոֆաշխատանք, պրոֆբյուրո, պրոֆմիություն, պրոֆկազմակերպիչ, պրոֆկազմակերպություն, պրոֆշարժում, պրոֆտոմս, պրոֆկոդմնորոշում, պրոֆտեխոպրոց, պրոֆտեխուսումնարան և այլն: Նշվածներից շատերը հիմա գրեթե չեն գործածվում, փոխարինվել են հայերեն համարժեք բաղադրիչով կամ այլ բառերով:

Սան (սանիտարական) - սանբաժին, սանբժիշկ, սանբուժգումարտակ, սանգումարտակ, սանէպիդկայան, սանհանգույց, սան-

հրահանգիչ, սանմաս, սանմաքրում, սանջոկատ, սանտեխմոնտաժային, սանտեխնիկ, սանտեխնիկա, սանտեղամաս, սանտեսուչ և այլն:

Սոց (սոցիալական) - սոցանապահով, սոցաշխատակից, սոցաշխատող, սոցապահովություն, սոցապծառայություն, սոցապնախարարություն, սոցաջակցություն, սոցատողջապահություն, սոցարտոնություն, սոցբաժին, սոցբաղադրիչ, սոցբլոկ, սոցբնակարանային, սոցգովազդ, սոցգործընկեր, սոցերաշխիք, սոցգարգացում, սոցեջ, սոցխումբ, սոցծառայություն, սոցծրագիր, սոցհարց, սոցհարցում, սոցձեռնարկություն, սոցճամբար, սոցմեդիա, սոցմշակութային, սոցներդրում, սոցնշանակություն, սոցնպաստ, սոցշահառու, սոցվճար, սոցվճարում, սոցտուն, սոցցանց, սոցցանցային, սոցփաթեթ, սոցքարտ, սոցօգնություն և այլն:

Վիքի (վիքիպեդիայի) – վիքիբառարան, վիքիդարան, վիքիհանդիպում – վիքիպեդիայի մասնակիցների հանդիպում, վիքիհանրություն – վիքիպեդիա նախագիծն իրականացնող մարդիկ, վիքիհետազոտություն – վիքիպեդիայի միջոցներով կատարվող հետազոտություն, վիքիմարքեթինգային – վիքիպեդիան գովազդող, վիքիմեդիա, վիքիմրցանակ – վիքիպեդիայի կողմից տրվող մրցանակ և այլն:

Տեխ // **տեխնո** (տեխնիկական, տեխնիկայի) – տեխանձնագիր, տեխանձնակազմ, տեխզննում, տեխմոնտաժ, տեխսպասարկում, տեխստուգում, տեխուսումնարան, տեխուսուցում, տեխօգնություն, տեխնոաշխարհ, տեխնոկառույց, տեխնոպաշտություն:

Տեխնո (տեխնոլոգիայի, տեխնոլոգիական) – տեխնոակումբ, տեխնոաշուն, տեխնոարդյունաբերություն, տեխնոբլոգ, տեխնոբլոգեր, տեխնոգիտավորձ, տեխնոդասընթաց, տեխնոերազանք, տեխնոընկերություն, տեխնոթագավոր, տեխնոթերահավատ, տեխնոիշխանություն, տեխնոհամայնք, տեխնոհսկա, տեխնոձեռներեց,

տեխնոճամբար, տեխնոմատակարար, տեխնոմիջավայր, տեխնոմշակույթ, տեխնոնշան, տեխնոնորություն, տեխնոշաբաթ, տեխնոշարժ, տեխնոշուկա, տեխնոտաղանդ, տեխնոտնտեսական, տեխնոցուցահանդես, տեխնոքաղաք, տեխնոֆոբիա և այլն: ԱՄՇԲ-ում չկա տեխնո-ով որևէ օրինակ, իսկ ԱՇԲԲ-ում առկա են միայն *տեխնոլոգ, տեխնոլոգիա, տեխնոլոգիական* սովորական բառերը:

Տուր (տուրիստական, տուրիզմի – զբոսաշրջային, զբոսաշրջության) – տուրարտադրանք, տուրբազա, տուրխումբ, տուրգոտի, տուրգործակալ, տուրհամակարգող, տուրհոսք, տուրփաթեթ, տուրօպերատոր և այլն:

Ֆին (ֆինանսական, ֆինանս/ներ/ի) - ֆինաշխատող, ֆինբաժին, ֆինբանկ, ֆինբյուջետային, ֆինգործակալ, ֆինմաս, ֆիննախարար, ֆիննախարարություն, ֆինպլան, ֆինվարկային, ֆինվերահսկողություն, ֆինտեսչություն, ֆինտեսուչ և այլն:

Տրված բաղադրիչներով հապավական բարդությունները ամենատարածվածներն են: Անշուշտ կան նաև այլ օրինակներ:

Ինչպես վերը նշել ենք, բառարաններում նույն հապավված բաղադրիչով կազմությունների մի մասի դեպքում նշվում, ուրիշ դեպքերում չի նշվում հապավում լինելը: Օրինակ, ՍՈՒԲ-ում *բուժայց, բուժանձնակազմ, բուժաշխատող* բառերի դեպքում նման նշում չկա, սակայն հապավում նշումով են հետևյալները՝ *բուժկետ, բուժհիմնարկ, բուժհսկողություն, բուժսպասարկում, բուժքննություն, բուժքույր, բուժօգնություն*:

Եթե նույնարժեք հապավված բաղադրիչները, ի տարբերություն անհոդակապ կազմությունների, հոդակապով են միացած, ապա որպես կանոն դրանք հապավում չեն համարվում, կամ բառարաններում նման նշում հնարավոր չէ գտնել, ինչպես՝ *բուժակայան, բուժանյութ, բուժաշիճուկ, բուժափորձ, գեղալող (գեղար-*

վեստական լոդ), գիտակայան, գիտակենտրոն, գիտավեճ, գիտատեղեկատու, գիտափորձ, զինագգեստ, զինախումբ, մարգահամալիր, տեխնադար և այլն: Հաճախ նաև հապավված բաղադրիչով և ձայնավորով սկսվող արմատով առանց հոդակապի կազմությունները չեն նշվում որպես հապավում՝ գիտավան, գիտարշավ, գիտարվեստ, մարգաշխարհ, մարգավան, մարզընկերություն, շինադր, շինարվեստ և այլն: Բնորոշ օրինակներ են ԱՄՀԲ-ում արձանագրված հոդակապով և անհոդակապ հետևյալ բառատարբերակները՝ բուժակայան // բուժկայան «բժշկական՝ բուժական կայան», որոնցից վերջինը, ի տարբերություն նախորդի, նշվել է որպես հապավում: Երկրորդը նաև արձանագրված է ԱՄՀԲ-ում:

Եզրակացություն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են հայերենի *խառը* հապավումները, մասնավորապես *վանկաբառային* ենթատեսակը իսկական բարդություններից տարբերակելու, հապավումներից ածանցմամբ և բառաբարդմամբ կազմությունները նույնպես հապավում համարել-չհամարելու, ապա և այդ բոլորի դասակարգման և ուղղագրության որոշ խնդիրներ: Հուսով ենք, որ այս հոդվածը իր նպաստը կբերի տվյալ խնդիրները կարգավորելու և, ինչու՞ չէ, առաջիկայում նաև խառը հապավումների բառարան կազմելու առումով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976:
2. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Երևանի պետական համալսարանի հրատ., Ե., 2014:
3. Գալստյան Հ., Ճիշտը և սխալը, «Զանգակ-97» հրատ., Ե., 2007:

4.Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Հայերենում գործածվող տառային հապավումների բառարան, «Էդիթ Պրինտ» հրատ., Ե., 2007:

5.Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատ., Ե., 2002:

6.Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, «Զանգակ-97» հրատ., Ե., 2009:

7.Խլղաթյան Ֆ., Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), «Հայաստան» հրատ., Ե., 1982:

8.Մարգարյան Ա., Հայերենի հապավումները և նրանց առանձնահատկությունները, Ա հ., Ե., 1977:

9.Մարգարյան Ա., Հայոց լեզվի հապավումների բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1979:

10.Մեյթիխանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, «Փյունիկ» հրատ., Ե., 1996:

11.Մեյթիխանյան Փ., Հայերենի ուղղագրական նոր բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2013:

12.Նոր բառեր, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ա-Ը պրակներ, Ե., 2015-2023 թթ.:

13.Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1987:

14.Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1999:

15.Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, «Մակմիլան Արմենիա» հրատ., Ե., 2002:

Хачатрян В. - Смешанные аббревиатуры армянского языка: некоторые проблемы классификации, дифференциации и написания.-В данной статье рассматриваются смешанные аббревиатуры армянского языка, обсуждаются проблемы их дифференциации, классификации и написания в арменоведении, а также предлагаются соответствующие решения некоторых из этих проблем.

Ключевые слова: аббревиатура, смешанная аббревиатура, буквенная, слоговая, аббревиационная сложность, компонент, классификация, дифференциация, написание.

Khachatryan V. - Mixed abbreviation of armenian: some classification, differentiation and writing problems.- This article examines the use of mixed abbreviations in Armenian, discusses the challenges of their differentiation, classification, and writing in Armenian studies, and proposes appropriate solutions for several of these issues.

Key words: abbreviation, mixed abbreviation, letter, syllabic, complexity abbreviation, component, classification, differentiation, writing.

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Օֆելյա Խաչատրյան

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բ.գ.թ., դոցենտ, ավագ գիտաշխատող

Սուսաննա Տիոյան

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բ.գ.թ., դոցենտ, ավագ գիտաշխատող

Այս բնագավառին քաջատեղյակ Մարգարիտ Գյուլնազարյանը հարուստ և ամբողջական նյութ է թողել կիրառական արվեստի տերմինների վերաբերյալ:

Դրանք հասնում են մի քանի հարյուրի և հանգամանորեն ուսումնասիրված ու ներկայացված են նրա՝ «Հայերենի կիրառական արվեստի տերմինները» մենագրության մեջ (անտիպ):

Ներկայացվող հոդվածում անդրադառնում ենք շուրջ մեկ տասնյակի հասնող տերմինների՝ ցանկություն ունենալով ընդհանուր պատկերացում տալ ամենատարբեր ոլորտներում դրանց ընդգրկված լինելու մասին:

Բազմաբնույթ ու յուրօրինակ է տերմինների այս բնագավառը՝ սկսած առօրյա կիրառականից՝ **ականջօղ**, **սպարանջան**, **մատանի**, **վզկոց** և այլն, մինչև բուն արվեստագիտական – մասնագիտական՝ **հազարափեշա** կամ **հազարփեշա** (պղնձե կամ արծաթե կուժ՝ հիմնականում ջրի կամ գինու համար), **շողյուն** (**Շողյունի** տեխնոլոգիայով ջնարակված սափոր²), **սակառ** (Ճյուղերից հյուսած մեծ

¹ Տե՛ս նոր բառգիրք հայկազյան լեզվի, Վենետիկ, 1836 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

կողով՝ քթոց³), **սկահ** (մեծ բաժակ, թաս⁴), **սկահակ** (փոքրիկ սկահ, գավաթ, բաժակ⁵), ինչպես նաև հանրաճանաչ – համագործածական՝ **արկղ, զամբյուղ, կողով, ճամպրուկ, պարկ, քամանչա** և այլն: Բերենք այս խմբի երկու օրինակ, որոնք տվյալ բնագավառի ամենակիրառականներից են.

1. Ալաբաստր – կիրառական արվեստում լայն գործածություն ունեցող բառերից է: Ծագում է եգիպտական Ալաբաստրոն քաղաքի անունից: Հայերենին անցել է հունարենի միջոցով: Մտ. Մալխասյանը այս բառի համար տալիս է մի նշանակություն. սպիտակ, թափանցիկ գաճային քար, որից լինում են անոթներ: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» նշված է նաև II իմաստը. **ալաբաստրե** անոթ: Այժմ փորձենք այդ բառը բնութագրել որպես կիրառական արվեստի տերմին: **Ալաբաստրը** գիպսի մանրահատիկ ու թափանցիկ տեսակ է, օգտագործվում է զարդանախշերի ներդրվագման, նաև դրանց պատրաստելու համար: Եգիպտոսում, Արաբիայում, Հնդկաստանում ու Սիրիայում գտնվող ալաբաստրը դեղին է, իսկ Իտալիայում՝ սպիտակ ու փափուկ:

Հունաստանում քսուքների հատուկ անոթներ կային, որոնք կոչվում էին Ալաբաստրոն՝ նեղ վզով, առանց ունկի: Դրանք սկզբնապես պատրաստվում էին ալաբաստրից, ավելի ուշ՝ նաև կավից, բրոնզից, ապակուց (հավանաբար եգիպտական ծագմամբ):

Այժմ **ալաբաստր** բառն իր I և II իմաստներն ունի հատկապես կիրառական արվեստում. լայնորեն օգտագործվում է հնագիտության ու ազգագրության բառապաշարում:

2. Մեանդր – երկրաչափական զարդանախշի տարածված տեսակ է, ունի գծի տեսք՝ հատված ուղիղ անկյամբ: Լայնորեն

3 Տե՛ս նույն տեղում:

4 Տե՛ս նույն տեղում:

5 Տե՛ս նույն տեղում:

կիրառվել է Հին Հունաստանում, Փոքր Ասիայում իր անունը ստացել է Գալարան գետի անունից: Այժմ այդ գետը կոչվում է Մենդերես (Թուրքիայում): Ինչպես տեսնում ենք, տեղանվան փոփոխությունը չի ազդել տերմինի անվանման վրա, և արվեստի պատմության մեջ մնացել է բառի հին ձևը:

Հեղինակի՝ Մ. Գյուլնազարյանի կողմից աշխատանքում առանձնացված խմբերից անդրադարձել ենք մասնավորապես գաղափարանշանների և կազմարարության տերմիններին:

Գաղափարանշաններ

1. իծագրեր – այն նշաններն են, որոնք հասարակ գծերով և տարբեր դիրքերով ժայռերի վրա այժ են քանդակել: Այդ նշանները հավանաբար գործածել են այն տոհմերը, որտեղ ոչխարն ու այծը տնտեսության գլխավոր ճյուղերն են եղել:

2. կոթողներ – դրանք 2-3 մ բարձրություն ունեցող, չորս կողմերով գեղեցիկ կերպով մշակված քարեր են: Կոթողների չորս կողմերի վրա էլ սովորաբար քանդակված են լինում զանազան վարդաքանդակներ և մարդկային պատկերներ: Դրանց կանգնեցնելու սովորությունը սկսվել է շատ հնուց և տևել մինչև մ. թ. 4-5-րդ դարերը. սակայն կիրառելի է նաև մեր օրերում:

3. մատուռ – մահարձանների մի տիպն էլ մատուռներն են. դրանք Նոր Հայկազյան բառարանում ներկայացված են՝ 1. Որևէ նահատակի կամ մարտիրոսի թաղված տեղում կամ նրա հիշատակին կառուցված փոքրիկ եկեղեցի, 2. Առհասարակ՝ փոքրիկ աղոթատեղի են*:

4. Տապանաքարեր – սրանք ամենաբարդ ու ճոխ մահարձանի այն տոհմական տապանաքարերն են, որ հնուց ի վեր կառուցում էին ֆեոդալներն իրենց տոհմի համար:

Այդպիսիք սկսել են մեծ տարածում գտնել նաև մեր ժամանակներում:

5. Խաչարձան – քանդակագործությունը արվեստագիտության ամենակատարյալ զարգացմանն է հասել խաչարձանների ձևավորման ոլորտում: Հանդիպում են մեկը մյուսին չկրկնող, չնմանվող հազարավոր խաչարձաններ:

6. Խաչքար - ա) խաչի ձևով՝ խաչ ներկայացնող արձան, որ դնում են գերեզմանի վրա, բ) նույնպիսի արձան ուխտատեղիներում՝ սրբավայրերում: Ներկայումս այդպիսիք կառուցվում և տեղադրվում են եկեղեցիների տարածքներում, դեպի եկեղեցիներ տանող ճանապարհներին: Օրինակ, Աշտարակի շրջանի Տեղեր գյուղի Մարիամ Աստվածածին եկեղեցին (13-րդ դար՝ կառուցված Մամախաթուն տիկնոջ պատվերով) ու դրա շրջապատը զարդարված են նմանատիպ քարերով:

7. ձիթհան – միջին դարերում ուտելու և հատկապես լուսավորության համար վառելու նպատակով օգտագործվում էին հենց բուսական յուղերը: Դրանցից գլխավորը՝ կտավատի և քունջութի ձեթն էր: Ձեթը պատրաստվում էր **ձիթհաններում**:

Կազմարարության տերմիններ

1. գրակապ – կազմողներն իրենց անվանում էին նաև **գրակապ**. գիրքը կապող՝ թերթերն իրար միացնող՝ կարող:

Այժմ կիրառելի է դրա **կազմարար** տարբերակը:

2. պահպանակ – գրքի սկզբից և վերջից սովորաբար դրվում էր հին մագաղաթյա ձեռագրերից վերցրած մեկական կամ երկուական թերթ **պահպանակ՝ կազմ**:

3. նկատ – մի մետաղե (մեծ մասամբ բրոնզե) գլանաձև, քառանիստ կամ ձվածիր կտրվածքով ձող է՝ պատրաստված կաղապարի մեջ ձուլելու եղանակով, որի մի ծայրին լինում է ռելիեֆ կամ փոս ընկած զարդ: **Դրոջմիչ**:

4. կոստող – զամ. դրանք ունեն լայն, շրջաձև ուռուցիկ գլխարկ և սովորաբար պատրաստված են լինում արծաթից (հանդիպում են

նան արծաթի, պղնձի և այլ մետաղների համաձուլվածքներից պատրաստված կոստղեր): Տե՛ս նաև Էդ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան» 1. Կտրած ճյուղի տակի մասը, որ մնում է բնի վրա:

2. Ճյուղի արմատային մասը ծառաբնի մեջ:

3. Փայտի վրայի խուլ՝ **հանգույց, ոստ**:

Այսպիսով, մեր լեզուն հարուստ է նաև կիրառական արվեստի ոլորտին բնորոշ բառապաշարով, որը ներկայանում է ամենաբազմազան բնագավառների դրսևորումներով՝ սկսած կանացի արդու-գարդերից մինչև կենցաղային, արհեստագործական իրերի անվանումները. թե որքանով մեզ հաջողվեց ընդհանուր պատկերացում տալ նշված ոլորտի վերաբերյալ, թողնում ենք Ձեր հայեցողությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նոր բառգիրք հայկազյան լեզվի, Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Տպարանի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836-1837:

2. Մտ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ Պետ. Հրատ.Եր., 1944-1945:

3. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր. 1976թ.:

4. Լ.Մ. Խաչատրյան, Լեզվաբանական տերմիններ ուսումնական բառարան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր ., 2021թ.:

Хачатрян О., Тиюян С. - Несколько терминов прикладного искусства.- Область терминов прикладного искусства разнообразна и уникальна. она охватывает слова от повседневного словарного

состава, как **ականջող** (серьги), **սպարանջան** (браслеты), **մատանի** (кольца), **վզնոց** (ожерелья) и т. д., до собственно профессионального – художественного – ремесленного **հազարափեշա** կամ **հազարփեշա** (тысячепеша или тысячпеша- медный или серебряный кувшин, в основном для воды или вина), **շոյուն** (шогюн - кувшин, глазированный по технологии Шогюн), **սակառ** (сакар - большой ящик, сплетенный из веток) и другие термины: Существующие эквиваленты на иностранных языках также приведены в исследовании:

Khachatryan O., Tioyan S. - Several terms of applied art.- The field of applied art terms is diverse and unique. it includes everyday practical items – **ականջող** - earrings, **սպարանջան** - bracelets, **մատանի** - rings, **վզնոց** - necklaces etc., to the very professional - artistic - handicrafts: **հազարափեշա** - hazapesha or **հազարփեշա** - hazapesha (copper or silver pitcher, mainly for water or wine), **շոյուն** - shogyun (jug glazed with **Շոյունի** - Shogyun technology), **սակառ** - bar (With a large rib woven from branches - nose), and other terms. Equivalentents in foreign languages are also given in the study.

THE IMPACT OF ARTIFICIAL INTELLIGENCE ON MODERN ELECTRONIC LEXICOGRAPHY

Hakobyan Frida

PhD in Philology,

Institute of Language after H. Acharyan of NAS RA,

Researcher.

frida.hakobyan@gmail.com

Keywords: artificial intelligence, natural language processing, machine learning, electronic lexicography, corpus analysis, word sense disambiguation, multilingual dictionaries.

This study explores the transformative impact of artificial intelligence (AI) on modern electronic lexicography, focusing on how advancements in natural language processing (NLP) and machine learning are reshaping traditional lexicographic practices. AI now automates many manual tasks involved in dictionary creation, such as corpus analysis, word sense disambiguation, and tracking semantic shifts, enabling lexicographers to process vast linguistic data more efficiently and accurately. Key findings highlight that AI-driven lexicography enables adaptable, user-focused dictionaries that can provide personalized definitions based on user behavior. Additionally, multilingual lexicons benefit from machine learning's ability to map semantic relationships across languages, enhancing bilingual and multilingual dictionaries. However, the study also uncovers challenges, including ethical concerns over algorithmic biases that may skew language representations, high computational demands, and privacy issues in data sourcing.

Future trends identified include AI-powered, real-time, adaptive dictionaries that anticipate language changes and cater to diverse linguistic needs. Although AI offers immense potential to modernize lexicography, the study emphasizes the importance of collaboration between technologists, linguists, and lexicographers to address these challenges and maintain linguistic integrity. Ultimately, AI's role in lexicography promises to make dictionaries more accessible, accurate, and responsive, addressing the modern language needs of a global user base.

Introduction to Electronic Lexicography and the Role of AI

Electronic lexicography, the practice of compiling, organizing, and updating dictionaries using digital tools, has profoundly changed how lexicographers and users interact with language resources. With the advent of the Internet, computers, and large text corpora, lexicographers gained access to new ways of collecting and analyzing language data on a scale previously unimaginable (Hanks, 2012). Instead of relying solely on manually compiled lists of words and definitions, modern lexicographers can now draw on extensive databases of text from books, articles, social media, and more, allowing for a more dynamic understanding of language as it evolves (Atkins & Rundell, 2008). This shift towards digital, electronic lexicography has enabled dictionaries to remain relevant and reflective of current language trends, making them accessible and updatable in real time.

Artificial intelligence (AI) has taken this transformation to a new level. AI technologies, especially those in natural language processing (NLP) and machine learning, have introduced unprecedented advancements in the way dictionaries are created and maintained. In traditional lexicography, a large portion of work focused on analyzing word usage, identifying various meanings, and tracking semantic changes

over time. This was time-intensive and often required significant human expertise. However, AI-driven lexicography uses algorithms that can process language data much faster and more accurately, helping lexicographers make sense of vast corpora with minimal manual intervention (McGillivray, 2020). By automating these tasks, AI enables lexicographers to focus on more complex linguistic insights and refine dictionaries to better serve the needs of diverse users.

One of AI's primary roles in electronic lexicography is automating the processing and analysis of text corpora, allowing for deeper insights into language trends. AI algorithms analyze vast amounts of text data to identify word frequencies, usage patterns, and emerging terms that lexicographers may want to include in dictionary entries. For example, machine learning models can detect new words or phrases that gain popularity on social media, enabling lexicographers to keep pace with language as it evolves in real time. This is particularly valuable in today's digital world, where language can shift rapidly due to influences from technology, culture, and globalization. In summary, electronic lexicography, supported by AI, represents a major shift in how language resources are created, maintained, and used. AI enhances the accuracy, adaptability, and inclusiveness of dictionaries, enabling lexicographers to meet the evolving needs of users in an increasingly digital and multilingual world. As AI continues to advance, its role in lexicography will likely deepen, offering even more innovative ways to understand and document language (McGillivray, 2020).

AI Technologies in Lexicography - Key Technologies, such as NLP and Machine Learning, and their applications

Artificial intelligence (AI) technologies are rapidly transforming lexicography, enhancing the precision, adaptability, and efficiency of modern dictionaries. Among these, natural language processing (NLP)

and machine learning (ML) are foundational technologies that drive numerous applications in electronic lexicography. Their integration has enabled lexicographers to automate traditionally labor-intensive processes, gain deeper linguistic insights, and create resources that are more responsive to the dynamic nature of language. Here we'll explore key AI technologies and the ways in which they are applied in lexicography to redefine how dictionaries are compiled, updated, and tailored to meet user needs.

Natural Language Processing (NLP) in Lexicography: Natural language processing is an area of AI that focuses on the interaction between computers and human language. In lexicography, NLP tools analyze text data to identify, classify, and interpret various language elements. By processing vast amounts of linguistic data, NLP enables lexicographers to identify patterns, track semantic changes, and generate definitions automatically, all of which are essential for maintaining accurate and up-to-date dictionaries (Ide & Véronis, 1998).

Corpus Analysis: NLP is instrumental in analyzing corpora, large structured sets of textual data, which are foundational to lexicography. Traditional lexicography relied on manually gathered citations and examples, but with NLP, lexicographers can analyze corpora that encompass millions of words across genres and contexts. NLP algorithms can parse this data to determine word frequency, collocations, and usage patterns. By doing so, NLP assists lexicographers in identifying the most relevant words and meanings to include in dictionaries. For example, tools like Google's Natural Language API provide lexical analysis functions that can automatically detect parts of speech, syntactic dependencies, and sentiment, aiding lexicographers in creating more robust entries (Kilgarriff, 2009).

Word Sense Disambiguation (WSD): One of the significant challenges in lexicography is disambiguating words with multiple meanings, especially those with subtle contextual differences. NLP techniques for WSD help identify the correct meaning of a word based on surrounding context, which is essential for providing accurate and meaningful definitions. For instance, the word "bank" can refer to a financial institution, a riverbank, or a repository. Using WSD, NLP algorithms can analyze the context in which "bank" appears to determine its intended meaning, ensuring that dictionary entries are as precise and useful as possible (Navigli, 2009).

Automatic Extraction of Collocations: Collocations, or the tendency for certain words to appear together (e.g., "strong coffee," "make a decision"), are essential in understanding language nuances. NLP tools can scan corpora to detect common collocations, enabling lexicographers to include these in dictionaries, which enhances users' understanding of natural language patterns. This automated extraction is faster and more accurate than manual methods, providing dictionary users with realistic examples of word usage.

Named Entity Recognition (NER): NER is an NLP process that identifies and categorizes proper nouns, such as people, organizations, and locations, within a text. In lexicography, NER aids in creating more comprehensive entries by automatically distinguishing between general terms and named entities, which may require different treatment in dictionaries. For instance, NLP can help recognize "Apple" as a company rather than a fruit, depending on the context, allowing dictionaries to provide definitions and examples that reflect the intended meaning.

Machine Learning (ML) in Lexicography

Machine learning, a branch of AI that allows systems to learn and improve from data, is central to many lexicographic applications. ML algorithms excel at recognizing patterns and making predictions, which enables them to handle vast, complex datasets that are common in modern lexicography. Machine learning enhances lexicography by automating tasks, improving semantic analysis, and facilitating language predictions (Zampieri et al., 2019).

Pattern Recognition and Semantic Analysis: Machine learning algorithms are trained on massive corpora to detect linguistic patterns, including word relationships and meaning shifts. For example, clustering algorithms can analyze word vectors—mathematical representations of words that capture their semantic properties—to determine synonyms, antonyms, and word associations. Lexicographers can then use these insights to develop richer dictionary entries that reflect real-world language use. For instance, ML models trained on data from social media can capture emerging slang or phrases, which are then included in dictionaries to ensure they remain relevant to contemporary language users (Hamilton et al., 2016).

Automated Definition Generation: Creating definitions is a time-consuming task that requires linguistic expertise. However, ML algorithms can be trained to generate preliminary definitions by identifying a word's semantic core and contextual uses. These algorithms use data from corpora to generate concise definitions based on a word's most common usages and meanings. Although these machine-generated definitions often require refinement by human lexicographers, they serve as an efficient starting point, reducing the manual workload and accelerating dictionary compilation processes (Camacho-Collados & Pilehvar, 2018).

Multilingual Lexicon Alignment: Machine learning models are also beneficial for creating bilingual or multilingual dictionaries by mapping words and phrases across languages. By leveraging vector-based models, machine learning can identify equivalent terms in different languages, making it easier to align meanings and provide accurate translations. For example, ML models trained on English and Spanish corpora can detect that “house” in English is equivalent to “casa” in Spanish, even if these terms do not always have one-to-one semantic alignment. This capability has been instrumental in building comprehensive multilingual dictionaries, expanding lexicographic resources to support global language diversity.

Sentiment Analysis: Understanding the sentiment associated with words or phrases can provide lexicographers with insights into how words are used in positive, negative, or neutral contexts. Machine learning models for sentiment analysis are commonly used in lexicography to determine how specific words are perceived by the public, particularly when analyzing slang or newly coined terms. Sentiment analysis is essential in capturing subtle cultural meanings and connotations, which lexicographers may include as usage notes in dictionary entries to provide users with a fuller understanding of a word’s implications.

Deep Learning Models and their applications

Deep learning, an advanced subset of machine learning, involves training artificial neural networks on large datasets. These models excel at processing natural language data, making them highly suitable for complex lexicographic tasks that require nuanced understanding.

Contextual Embeddings for Semantic Nuance: Traditional word embeddings, like word2vec, capture words’ meanings based on their surrounding words. However, deep learning models like BERT

(Bidirectional Encoder Representations from Transformers) generate contextual embeddings, meaning they capture word meanings in context. For lexicographers, this provides more detailed information on how words' meanings change based on usage. For example, deep learning can help identify that "book" in "book a ticket" differs from "read a book," enabling lexicographers to create more accurate and context-sensitive entries.

Automatic Error Detection and Correction: Deep learning models are also used to identify inconsistencies, errors, or outdated information in existing dictionary entries. By comparing current usage patterns with historical data, these models can detect entries that may need updating or revision. This helps maintain the dictionary's quality over time and ensures that definitions stay relevant as language evolves.

Dialect and Variant Recognition: Deep learning models can also assist lexicographers in identifying dialectal or regional variations of words. By analyzing large corpora from diverse geographic areas, deep learning can highlight variations that reflect how language is used differently across regions. For example, American and British English have variations in spelling, vocabulary, and sometimes meaning. Deep learning helps lexicographers capture these nuances, creating resources that cater to regional language differences.

The application of NLP, machine learning, and deep learning in lexicography is not without challenges. The need for vast amounts of data and computational resources can be costly, and there are ethical concerns, especially regarding bias in AI models. However, the potential benefits are immense. AI technologies allow lexicographers to create resources that are more comprehensive, up-to-date, and reflective of the diversity of human language. As AI continues to advance, lexicography is likely to see further innovation, including personalized dictionaries that adapt to

individual user preferences and real-time updates that keep pace with language changes.

In conclusion, NLP, machine learning, and deep learning are at the core of AI-driven lexicography, offering tools that make language resources more adaptable, accurate, and accessible. These technologies have not only revolutionized the technical processes within lexicography but also enhanced the user experience by delivering dictionaries that are relevant to the modern linguistic landscape. With ongoing development in AI, lexicography is poised to become even more dynamic, ultimately providing a richer understanding of language in all its forms and contexts.

Enhancements in Lexicographic Practices

The adoption of AI-driven techniques, such as corpus analysis and real-time updates, has changed how lexicographers manage and present linguistic information.

Corpus Analysis and Automation: Traditional lexicography relied on manually curated corpora, but AI has introduced automation, allowing for the analysis of vast text databases. Machine learning (ML) models, especially those utilizing natural language processing (NLP), process immense corpora to identify trends in word usage, track frequency, and detect emerging terms. By automatically processing data from books, online articles, social media, and other sources, AI enables lexicographers to draw insights from current language use. Automated corpus analysis is now instrumental in updating dictionary entries, ensuring that they reflect contemporary language accurately and promptly.

Real-Time Updates and Adaptability: In today's fast-evolving linguistic landscape, real-time dictionary updates have become crucial. AI models can detect changes in word meanings, identify popular phrases, and track language variations across regions, all in real-time. By

automatically monitoring online content, AI-driven lexicography systems provide timely insights into emerging trends, enabling lexicographers to incorporate new words and senses quickly. This adaptability allows dictionaries to remain relevant and reflect the latest language shifts, catering to users' evolving needs.

User-Focused Lexicography: AI also supports personalized dictionary experiences. Machine learning can analyze users' preferences and search histories to suggest customized definitions and usage examples, creating a more relevant, user-centered lexicon. This feature can be especially valuable in multilingual lexicography, where dictionaries provide nuanced translations and explanations tailored to specific language backgrounds.

Conclusion

In conclusion, the integration of AI in lexicography is transforming how dictionaries are created, maintained, and used, marking a shift toward more dynamic and user-centered language resources. AI-driven tools enable lexicographers to process vast linguistic data with greater efficiency, facilitating the rapid inclusion of emerging terms and evolving meanings in real time. Through NLP, corpus analysis, and machine learning, AI has streamlined traditional lexicographic tasks, making it possible to track language trends and semantic shifts at an unprecedented pace. These advancements lead to more adaptable, multilingual lexicons that cater to a global audience, allowing for a richer and more accessible linguistic experience. However, challenges such as ethical concerns over biases, data privacy, and the demand for substantial computational resources highlight the need for collaborative oversight among technologists, linguists, and lexicographers. Future dictionaries will likely evolve into adaptive, personalized tools that anticipate users' needs and

reflect cultural and regional nuances. As AI continues to advance, its application in lexicography holds the promise of deeper insights into language and broader accessibility for users worldwide.

References

Atkins, B. T. S., & Rundell, M. (2008). *The Oxford Guide to Practical Lexicography*. Oxford University Press.

Camacho-Collados, J., & Pilehvar, M. T. (2018). From Word to Sense Embeddings: A Survey on Vector Representations of Meaning. *Journal of Artificial Intelligence Research*, 63, 743-788.

Hamilton, W. L., Leskovec, J., & Jurafsky, D. (2016). Diachronic Word Embeddings Reveal Statistical Laws of Semantic Change. *Proceedings of the 54th Annual Meeting of the Association for Computational Linguistics*.

Hanks, P. (2012). Corpus Evidence and Electronic Lexicography. In S. Granger & M. Paquot (Eds.), *Electronic Lexicography* (pp. 57–81). Oxford University Press.

Ide, N., & Véronis, J. (1998). Introduction to the Special Issue on Word Sense Disambiguation: The State of the Art. *Computational Linguistics*, 24(1), 1-40.

Kilgarriff, A. (2009). Simple Maths for Keywords. In *Proceedings of the Third International Conference on Corpus Linguistics*.

McGillivray, B. (2020). *Computational Lexicography: A Practical Guide to Creating Electronic Dictionaries*. Cambridge University Press.

Navigli, R. (2009). Word Sense Disambiguation: A Survey. *ACM Computing Surveys*, 41(2), 1-69.

Zampieri, M., Malmasi, S., Nakov, P., Rosenthal, S., Farra, N., & Kumar, R. (2019). Predicting the Type and Target of Offensive Posts in

Social Media. Proceedings of the 2019 Conference of the North American Chapter of the Association for Computational Linguistics.

Акопян Ф. – Влияние искусственного интеллекта на современную электронную лексикографию. – В статье исследуется влияние искусственного интеллекта (ИИ) на современные электронные словари, акцентируя внимание на преобразующих возможностях в лексикографии. ИИ теперь автоматизирует многие задачи, такие как анализ корпусов текстов, разбор значений слов и отслеживание изменений в языке, что повышает точность и скорость создания словарей. Использование ИИ позволяет создавать адаптируемые, ориентированные на пользователя словари, которые могут предлагать персонализированные определения. Применение машинного обучения также улучшает составление многоязычных словарей за счёт сопоставления смыслов между языками. Несмотря на значительный потенциал ИИ для модернизации лексикографии, автор подчеркивает важность взаимодействия между технологами и лексикографами для сохранения лингвистической точности. Роль ИИ в лексикографии обещает сделать словари более доступными, точными и актуальными, отвечая современным потребностям глобального сообщества пользователей.

Ключевые слова: Искусственный интеллект, обработка естественного языка, машинное обучение, электронная лексикография, корпусный анализ, многоязычные словари.

Հակոբյան Ֆ. – Արհեստական բանականության համակարգերի կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ - Հոդվածը նվիրված է էլեկտրոնային բառարանագրության մեջ արհեստական բանականության համակարգերի կիրառության եղանակների

ներկայացմանը: Նշվում է, որ ԱԲ համակարգերի միջոցով հնարավոր է դյուրացնել կամ ամբողջությամբ մեքենայացնել այնպիսի բառարանագրական աշխատանքներ, ինչպիսիք են էլեկտրոնային կորպուսներում եղած տեքստերի մեքենական վերլուծությունը և բառացանկի կազմումը, բառահոդվածի մշակումը, նոր բառերի մեքենական դուրսբերումը, բազմիմաստ բառերի՝ տարբեր իմաստներով գործածության օրինակների առանձնացումը, բառերի միջև եղած իմաստային կապերի բացահայտումը և ներկայացումը:

Բանալի բառեր. արհեստական բանականություն (ԱԲ), բնական լեզվի մշակում, մեքենական ուսուցում, էլեկտրոնային բառարանագրություն, տեքստի մեքենական վերլուծություն:

**ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ**

Հակոբյան Ֆրիդա

ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
գիտաշխատող
frida.hakobyan@gmail.com

Բանալի բառեր. Էլեկտրոնային բառարանագրություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, վեբ տեխնոլոգիաներ, արհեստական բանականություն, էլեկտրոնային բառարան, էլեկտրոնային շտեմարան, նոր բառեր:

Հայերենը համացանցային լեզու դարձնելու, այն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հաջողությամբ գործածելու համար առաջին հերթին անհրաժեշտ է նկարագրել և ներկայացնել հայերենի բառապաշարը՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անընդհատ ու շարունակական զարգացումները: Այս դեպքում մեծապես կարևորվում է էլեկտրոնային բառարանագրության ոլորտում տարվող աշխատանքների արդիականացումը, էլեկտրոնային բառարանների, բառային հենքերի կամ շտեմարանների կազմության ժամանակ ժամանակակից վեբ տեխնոլոգիաների և ԱԲ համակարգերի կիրառությունը: Հետևաբար արդի հայ բառարանագրության առջև դրված խնդիրներից հարկ է էապես կարևորել ինչպես հայերենի բառապաշարի համաժամանակյա և տարածամանակյա ուսումնասիրությունը, բառերի իմաստային և հասկացական կողմերի բացահայտումն ու

քննությունը, այնպես էլ լեզվի բառապաշարի էլեկտրոնային շտեմարաններ, բառային հենքեր ստեղծելու հարցերը¹:

Ընդհանուր առմամբ՝ ժամանակակից վեբ տեխնոլոգիաները զարգացման միանգամայն նոր մակարդակի են հասցրել լեզվի կիրառական տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքները: Վերջին տարիներին դրանք լայնորեն կիրառվում են նաև էլեկտրոնային բառարանագրության մեջ: Էլեկտրոնային բառարանագրությունը համակարգչային լեզվաբանության ամենաարագ զարգացող ուղղություններից է: Այն զբաղվում է էլեկտրոնային բառարանների ստեղծմամբ, բառարանային հոդվածների կազմմամբ, բառահոդվածների ներկայացման եղանակների մշակմամբ: Ըստ իրենց բնույթի՝ էլեկտրոնային բառարանները պայմանակաՆոր են կարելի է բաժանել երկու խմբի.

1. Լեզվական տվյալների մշակման, էլեկտրոնային թարգմանությունների համար մեքենական ձևաչափով կազմված բառարաններ, որոնք նախատեսված չեն առանձին օգտագործման համար:

2. Տարբեր բնույթի և նպատակի ծառայող, լեզվակիր հանրության պահանջները բավարարող էլեկտրոնային բառարաններ, որոնք աչքի են ընկնում բառամիավորների առավել լիակատար նկարագրությամբ, ներկայացնում են բառապաշարային տարբեր խմբերի միջև գործող իմաստային-հասկացական հարաբերությունները²:

Այս հոդվածում կանդրադառնանք հայ լեզվաբանության մեջ էլեկտրոնային բառարանագրության բնագավառում կատարված

¹ Տե՛ս **Ֆ. Հակոբյան**, Նոր բառերի մեքենական որոնման խնդիրները, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 136:

² Տե՛ս **Ֆ. Հակոբյան**, Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ, Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023, էջ 153:

աշխատանքներին, կներկայացնենք մեր կողմից ստեղծված հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանը, դրանում նոր բառերի ներկայացման եղանակները:

Հայ բառարանագրությունն ունի հարուստ ավանդույթներ: Հայերենագիտության այս բնագավառում տասնամյակներ շարունակ կատարվել են զգալի աշխատանքներ. կազմվել են բացատրական, հոմանիշների, հականիշների, դարձվածաբանական, թարգմանական (երկլեզվյան ու բազմալեզվյան), լեզվաբանական, բարբառային, տերմինաբանական, ուղղագրական, հայոց լեզվի նորաբանությունների, տարբեր հեղինակների լեզվի, հաճախականության, հայկական անձնանունների, ազգանունների, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների և այլ արժեքավոր բառարաններ³:

Հատկապես վերջին տասնամյակներում հայ լեզվաբանության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նորաբանությունների և նոր բառերի տարբերակման խնդրին, դրանց իմաստային քննությանը, բառակազմակերպական կաղապարների վերլուծությանը: Առավելապես կարևորվել է նաև նորաբանությունների բառարանների ստեղծումը: Դա պայմանավորված է հայերենի բառապաշարի արդի վիճակն արտացոլող բացատրական բառարանի բացակայությամբ, քանի որ համեմատաբար վերջին շրջանում ստեղծված բացատրական բառարաններից ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի» (1969-1980), Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (1976), Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանի»

³ Տե՛ս <https://bit.ly/3GIlrHd>:

(1973) լույսընծայումից անցել է մի քանի տասնամյակ: Այդ ընթացքում լեզվի բառապաշարը կրել է նկատելի փոփոխություններ. մի կողմից՝ դուրս են մնացել բազմաթիվ հնաբանություններ, սակավ գործածական բառեր, մյուս կողմից՝ բառապաշարը համալրվել է հսկայական թվով նորաբանություններով, որոնցից շատերը տարիների ընթացքում լայնորեն գործածվել են և համալրել հայերենի բառապաշարի հարուստ բառազանձը:

Վերոնշյալ բացատրական բառարանները չեն ներառում լեզվում հաճախադեպ կիրառություն ունեցող բոլոր նորակազմությունները, ուստի ժամանակ առ ժամանակ հրատարակվում են նորաբանությունների բառարաններ: Մինչև օրս ստեղծված նորաբանությունների բառարաններից կարող ենք առանձնացնել Ֆ. Խլղաթյանի «Բառարան-տեղեկատուն (նոր բառեր և իմաստներ)» (1982), որն ընդգրկում է 70-80-ական թթ. ժամանակակից հայերենում ստեղծված (մասամբ նաև նախորդ բառարաններից դուրս մնացած) և այդ տարիների պարբերական մամուլում գործածված բառերը: Բառարանից դուրս են մնացել նորագույն գեղարվեստական գրականության մեջ գործածված, սակայն լայն կիրառություն չունեցող հեղինակային նորակազմությունները. լեզվաբանի գլխավոր նպատակը եղել է հաճախակի գործածվող բառերը ներկայացնելը: Հաջորդը Փ. Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարան» է, որը պարունակում է վերջին տարիների մամուլում և գեղարվեստական գրականության մեջ գործածված շուրջ 3000 նոր բառեր ու տերմիններ:

Նորաբանությունների բառարանների թվում առանձնանում է Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը» (2002): Ունենալով շուրջ 30 տարվա ժամանակահատվածում հայ մամուլի և գեղարվեստական գրականության մեջ գործածված

նորաբանությունների հարուստ բառաքանակ՝ լեզվաբանն իր բառարանում ընդգրկել է բառագիտական տեսակետից բոլոր տիպի նորաբանությունները՝ նորակազմ բառերը, տերմինները (ինչպես փոխառյալ, այնպես էլ սեփական բառակազմական կաղապարներով կազմված), իմաստային նորաբանությունները (արդեն եղած բառերի նոր ստացած իմաստները), նոր դարձվածքները, կայուն և ազատ բառակապակցությունները, հապավումները (ոչ զուտ տառային), առանձնահատուկ արտահայտությունները, ինչպես նաև անհատական-ոճական նորաբանություններն իրենց դիպվածական և հեղինակային տեսակներով⁴:

Վերոնշյալ բառարանների համեմատությամբ իրենց ընդգրկած բառապաշարի ծավալով և բազմազանությամբ, պարբերաբար հրատարակվելու շնորհիվ առավել մեծաթիվ բառաքանակ ներկայացնելու հնարավորությամբ շահեկանորեն տարբերվում են ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտում պարբերաբար հրատարակվող «Նոր բառերի» պրակները: Պրակներում ներկայացված են համացանցից, մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից, հետուստատեսությունից, գովազդային հոլովակներից ու ցուցանակներից քաղված մեծաթիվ բառեր, որոնք վկայված չեն եղած բացատրական և նորաբանությունների բառարաններում: Պրակների հեղինակները նպատակ ունեն հավաքված հազարավոր նորակազմություններից, որոշակի սկզբունքով բառընտրություն կատարելով, կազմել «Նոր բառերի ընդարձակ բառարան», որում կարտացոլվեն XXI դարասկզբի հայերենի բառապաշարում տեղի ունեցած տեղաշարժերը⁵:

⁴ Մ. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002, էջ 7:

⁵ Նոր բառեր. Ա պրակ (Կազմ՝ Ա. Գալստյան, Գ. Հովսեփյան, Ա. Սահակյան, Լ. Սահինյան), Ե., 2015, էջ 4:

Ի տարբերություն տպագիր բառարանագրության՝ հայ լեզվաբանության մեջ էլեկտրոնային բառարանագրության ոլորտում տարվող աշխատանքները չի կարելի գոհացուցիչ համարել, քանի որ դրանք սահմանափակվել են միայն տպագիր բառարանների սկանավորված տարբերակների էլեկտրոնային գրադարանի ստեղծումով: Ըստ իրենց ներկայացրած բառարանների բնույթի՝ պայմանականորեն կարելի է առանձնացնել այնպիսի կայքեր, որոնցում ներկայացվում են տպագիր բառարաններն առանց բովանդակային որևէ փոփոխության: Այս կայքերի թվին է պատկանում www.nayiri.com կայքը, որն աշխատում է Համազգային հայ կրթական և մշակութային միության հովանավորությամբ: Կայքում ներկայացված բառարանները որևէ փոփոխության ենթարկված չեն: Որոնման արդյունքում էկրանին հայտնվում է թղթե տպագիր բառարանի սկանավորված տարբերակը: Այլ կերպ են ներկայացված բառերը bararonline.com կայքում: Ընդգրկված են բացատրական (Է. Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան»), հոմանիշների (Ա.Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»), հականիշների (միավորված մի քանի աղբյուրներից), հայռուսերեն (Ե.Հ. Գալստյան, «Հայ-ռուսերեն բառարան»), ռուս-հայերեն (Ա. Ս. Ղարիբյան, «Ռուս-հայերեն բառարան»), հայերեն-անգլերեն բառարանները: Այս կայքում ևս վերոնշյալ բառարանները բովանդակային որևէ փոփոխության ենթարկված չեն: Կայքում բառահոդվածն ունի հետևյալ կառուցվածքը. տրվում է բառի բացատրությունը, ներկայացվում են հոմանիշները, հականիշները, դարձվածքները, ռուսերեն և անգլերեն թարգմանությունները: Թարգմանությունները հիմնականում ներկայացնում են բառի հիմնական իմաստները: Պետք է նշել, որ բառիմաստի բացատրությունից բացի՝

իմաստային մյուս դաշտերը թերի են ներկայացվում, շատ դեպքերում դրանք դատարկ են⁷:

Հայերեն Վիքիբառարանը համագործակցային նախագիծ է, որի շրջանակներում ստեղծվում է ազատ բովանդակությամբ բազմալեզու բառարան: Նպատակն է ներկայացնել բոլոր լեզուների բոլոր բառերի բացատրությունները հայերենով: Վիքիբառարանում ներառված են նաև բառերի ձայնային տվյալները: Նպատակ ունենալով տալ բառի ամբողջական նկարագրությունը՝ ներկայացվում են բառի ստուգաբանությունը, արտասանությունը, քաղվածքներ տարբեր ստեղծագործություններից, հոմանիշները և թարգմանությունները: Այս բառարանում ևս բառի նկարագրության ոչ բոլոր դաշտերն են լրացված:

Ըստ նախագիծն իրականացնողների՝ հայերեն Վիքիբառարանում կա 303 648 բառ: Վիքիբառարանի ամենամեծ թերությունն այն է, որ բառարանը կարող է խմբագրել յուրաքանչյուր ոք:

Ակնհատ է, որ էլեկտրոնային բառարանագրության արդի փուլում տպագիր բառարանների սկանավորված տարբերակները որևէ կայքում տեղադրելն այլևս բավարար չէ: Անհրաժեշտ է օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունները՝ լուծելու համար հայ բառարանագրության դեռևս չլուծված այնպիսի առանցքային խնդիրներ, ինչպիսիք են հայերենի ամբողջ բառապաշարը ներկայացնող պատմական, արդի հայերենի նորագույն բացատրական, օտարաբանությունների, տերմինաբանական և այլ կարգի էլեկտրոնային բառարանների ստեղծումը, դրանցում բառապաշարի իմաստային-հասկացական

⁷ <https://bararanonline.com/>

⁸ <https://hy.wiktionary.org/>

կապերի ներկայացումը և այլն: Վերոնշյալ բառարանների համացանցային ներկայացման ընդհանուր ձևաչափ կարող է լինել հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանը:

Դեռևս տարիներ առաջ մեր հոդվածներից մեկում⁹, ըստ էության, ներկայացրել ենք հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանի ստեղծման նախագիծը, մշակել շտեմարանում բառահոդվածի կառուցվածքը, իմաստային-հասկացական հարաբերությունների ներկայացման եղանակը: Էլեկտրոնային շտեմարանի կազմության սկզբունքները մշակելուց բացի՝ ստեղծել ենք նաև ծրագրի տեխնոլոգիական հենքը՝ ծրագրաշարը: Առաջիկայում շտեմարանը կներկայացվի առանձին համացանցային կայքում, որի շնորհիվ հասանելի կդառնա լեզվակիր հանրության առավել լայն շրջանակներին:

Ինչ խոսք, նման հսկայածավալ նախագիծը հնարավոր է իրականացնել բացառապես փուլային եղանակով, քանի որ ընդամենը մեկ բառարանի թվայնացումը, տեխնիկական սխալների և վրիպակների վերացումը, բառարանային նյութի՝ շտեմարանում ավելացումը բավական ժամանակատար աշխատանք է: Այս պահին կայքում ներկայացված է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտում պարբերաբար հրատարակվող «Նոր բառեր» պրակների բառարանային նյութը: Ինչպես արդեն նշել ենք, պրակների հեղինակները նպատակ ունեն հավաքված հազարավոր նորակազմություններից, որոշակի սկզբունքով բառընտրություն կատարելով, կազմել «Նոր բառերի ընդարձակ բառարան», որում կարտացոլվեն XXI դա-

⁹ Տե՛ս **Ֆ. Հակոբյան**, Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կառուցման ուրվագիծ, Բանբեր Երևանի համալսարանի. Ե., 2014, էջ 60-70:


բասկզբի հայերենի բառապաշարում տեղի ունեցած տեղաշարժերը: Տվյալ դեպքում էլեկտրոնային շտեմարանը կարող է վստահորեն համարվել նոր բառերի էլեկտրոնային բառարան, որում ներկայացված են «Նոր բառեր» պրակաշարի (Ա-Ը պրակներ) բառերը՝ 10.000-ից ավելի բառամիավոր: Շտեմարանն ունի որոնման համակարգ. կարելի է գրել ցանկացած բառ և արտահայտություն, որոնել և տեսնել որոնված բառի բացատրությունը: Օրինակ՝ եթե փնտրենք **ագրոլրատու** բառը, որոնման արդյունքները ներկայացվում են այսպես՝

The screenshot shows a search interface with a search bar containing the text 'ՈՒՆՆՈՒՄ' and a blue 'ՍՆՊԵՐ' button. To the right, there is a list of search results. The first result is 'ՈՒՆՆՈՒՄ' with a sub-entry 'ՈՒՆՆՈՒՄ - սոմոլի ռ ղսխոեբնոլոլոլ խղոոսոբն'.

The screenshot shows a search interface with a search bar containing the text 'ՈՒՆՆՈՒՄ' and a dropdown menu with the text 'ոնլրնոլոլնոլոլ'. To the right, there is a blue 'ՍՆՊԵՐ' button.



Կարող ենք նաև գրել բառի առաջին բաղադրիչը և տեսնել այդ բաղադրիչով սկսվող բոլոր բառերը: Այսպես՝ եթե գրենք **ագրո-**բաղադրիչը, արդյունքն այսպիսին կլինի՝




Նպատակահարմար ենք գտել շտեմարանի՝ բառարաններով համալրումը սկսել նոր բառերից, քանի որ հայերենի նորագույն բացատրական բառարանի բացակայության պատճառով ցանկացած բառ, որը վկայված չէ տպագիր բառարաններում, համարվում է նոր բառ: Տրամաբանական չէ քառորդ դար առաջ ստեղծված և լայն գործածություն ունեցող բառերը նոր բառ համարել միայն այն պատճառով, որ դրանք վկայված չեն կես դար առաջ ստեղծված բացատրական բառարաններում:

Զիտսելով էլեկտրոնային շտեմարանի՝ տպագիր բառարանի համեմատությամբ ունեցած նկատելի տարբերությունների մասին՝ նշենք միայն, որ այն հնարավոր կլինի շարունակ հարստացնել-համալրել նոր բառերով՝ առանց ժամանակային որևէ սահմանափակման: Ուստի հարկ կլինի նաև վերանայել նորաբանությունների ավանդական ըմբռնման հարցը, քանի որ նորաբանություն են համարվում բառարաններում դեռևս չընդգրկված բառերը, իսկ շտեմարանում կարելի է դրանք ավելացնել ցանկացած պահի: Ակնհայտ է, որ էլեկտրոնային շտեմարանը կարող է լիովին

արտացոլել բառապաշարի արդի վիճակը ցանկացած ժամանակահատվածի հարաբերությամբ՝ ի տարբերություն տպագիր բառարանների, որոնց հրատարակումից անցնում են տասնամյակներ, և առաջանում է զգալի անջրպետ տվյալ փուլում լեզվի բառապաշարի և տպագիր բառարանում ներկայացված բառապաշարի միջև:

Շտեմարանն առավել լիակատար դարձնելու նպատակով առաջիկայում նախատեսում ենք ավելացնել ոչ միայն արևելահայերենի, այլև գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի բառապաշարը ներկայացնող բառարանները:



Շտեմարանում բառարանային նյութի ավելացումից բացի՝ անհրաժեշտ ուշադրություն ենք դարձրել նաև բառահոդվածի կառուցվածքին: Էլեկտրոնային շտեմարանում բառամիավորների նկարագրության սկզբունքները մշակելիս նկատի ենք ունեցել համակարգչային բառարանագրության ուսանելի փորձն ու հայերենի լեզվական առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ նախատեսվում է շտեմարանում հայերենի բառապաշարը ներկայացնել իր համաժամանակյա վիճակով, կատարել բառապաշարի հնարավորինս ամբողջական հասկացական դասակարգում, ներկայացնել բառերի հասկացական և իմաստային փոխհարաբերությունները, տալ գլխաբառի *հնչյունական, բառագիտական, քերականական* սպառիչ բնութագրերը համապատասխան դաշտերով:

Այսպիսով՝ կարելի է վստահորեն ասել, որ լեզվաբանական նպատակներով շտեմարանի կիրառությունը զարգացման միանգամայն նոր աստիճանի կհասցնի հայերենի գործածությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գալստյան Ա., Հովսեփյան Գ., Սահակյան Ա., Սահինյան Լ., Նոր բառեր. Ա պրակ, Ե., 2015:

2. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:

3. Հակոբյան Ֆ., Նոր բառերի մեքենական որոնման խնդիրները, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 136- 143:

4. Հակոբյան Ֆ., Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կառուցման ուրվագիծ, Բանբեր Երևանի համալսարանի. Ե., 2014, էջ 60-70:

5. Հակոբյան Ֆ., Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ, Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023, էջ 153-161:

6. <https://bararanonline.com/>

7. <http://nayiri.com/>

8. <https://hy.wiktionary.org/>

Hakobyan F. - Methods of Presenting New Words in the Electronic Database of the Armenian Language.- The article focuses on modern approaches to presenting Armenian vocabulary using electronic

technologies. It is stated that electronic lexicography has become one of the fastest-growing fields in computational linguistics, dealing with the creation and presentation of electronic dictionaries. A proposal for creating a comprehensive electronic database of Armenian vocabulary has been outlined. The project aims to make the database accessible through a website to serve a broader audience. It is highlighted that the process requires significant time and effort. Currently, the "New Words" volumes published by the Institute of Language of the NAS RA are being included in the database. The ultimate goal of this ongoing project is to present the Armenian vocabulary in the database in its contemporary state, to create a comprehensive conceptual classification of the vocabulary, to present the conceptual and semantic relationships between words, and to provide detailed phonetic, lexical, and grammatical descriptions of the headwords in the relevant fields.

Keywords: electronic lexicography, information technologies, web technologies, artificial intelligence, electronic dictionary, electronic database, new words.

Акобян Ф. - Методы представления новых слов в электронных базах данных армянского языка. - Статья посвящена современным подходам представления армянского словаря с использованием электронных технологий. Утверждается, что электронная лексикография стала одной из самых быстрорастущих областей в вычислительной лингвистике, занимающейся созданием и представлением электронных словарей. Представлен проект по созданию электронной базы данных армянского лексикона. Цель проекта — сделать базу данных доступной через веб-сайт для более широкой аудитории. В настоящее время в базу данных включаются тома "Новые слова", издаваемые Институтом языка НАН РА. Окончательная цель

этого продолжающегося проекта — представить армянский лексикон в базе данных в его современном состоянии, создать комплексную концептуальную классификацию лексики, представить концептуальные и семантические связи между словами, а также предоставить подробные фонетические, лексические и грамматические описания словарных статей в соответствующих областях.

Ключевые слова: электронная лексикография, информационные технологии, веб-технологии, искусственный интеллект, электронный словарь, электронная база данных, новые слова.

**ՆՈՐԱԿԱԶՄ ՆԵՐՈՒՆԱԿ ԲԱՌԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**(ըստ «Նոր բառեր» բառարանաշարի)
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳՍՅԱՆԵ**

**ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտաշխատող**

Բանալի բառեր` նորաբանություն, նորաստեղծ և նորակազմ բառ, ածանցում, ներունակ բառ, բառաստեղծում, գունանուն, կաղապար:

Հայերենը նոր բառեր ստեղծելու բառակազմական հարուստ և անսպառ հնարավորություններ ունի: Լեզվի բառապաշարը վերարտադրվում է խոսքային գործունեության ժամանակ` չհակասելով լեզվի ընդհանուր համակարգին: Ինչպես նշվում է գիտական գրականության մեջ, նոր բառեր կազմելու, նորաստեղծ բառերը համալրելու գործընթացը հնարավորություն է ընձեռում հարստացնելու հայոց լեզուն` արդիականացնելով, բավարարելով հասարակական կյանքի երևույթներն ու առարկաների հատկանիշներն անվանելու պահանջը: Հասարակության կյանքի փոփոխությունները առաջացնում են նոր երևույթներ, նոր հարաբերություններ, և ստեղծվում են նոր բառեր, բառակապակցություններ, արտահայտություններ` դրանք անվանելու համար: Արձանագրվում է նաև, որ նորակազմ բառերն ունեն բարձր կենսունակություն, բաղադրյալ են և համապատասխանում են բառակազմական օրինաչափություններին:

Հայ լեզվաբանները միշտ էլ հատուկ ուշադրության են արժանացրել բառաստեղծման և բառակազմական խնդիրները: Է. Աղայանը գրում է. «Ժամանակակից հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնք բառակազմական մեծ հնարավորություններ

ունեն: Բառաբարդման գրեթե անսպառ հնարավորությունները՝ բառակազմական կադապարների ու բաղադրական հիմքերի բազմազանությամբ, ածանցների հարստությունն ու ածանցական բառակազմությունների գրեթե անսահմանափակ հնարավորությունները թույլ են տալիս ազատորեն կազմել նորանոր բառեր ու դրանցով հարստացնել մեր լեզվի բառապաշարը»¹:

Նոր բառեր կամ նոր բառակապակցություններ ստեղծելը պայմանավորված է նաև խոսքային գործունեության ժամանակ արտահայտչականության, պատկերավորության հասնելու նպատակներով:

Նորաստեղծ բառեր առկա են գրեթե բոլոր ոլորտներում (գիտություն, առևտուր, բիզնես, մշակույթ և այլն): Բառակազմության և իմաստափոխության շնորհիվ ի հայտ են գալիս նոր բառեր՝ նոր իմաստներով:

Ըստ Թ. Ղարազյուլյանի՝ պոտենցիալ (ներունակ) են այն բառերը, որոնք գոյություն ունեն լեզվի բառակազմական համակարգում, գործածվում են ժամանակակից հայերենում նոր բառեր կազմելիս, արտադրողական են, և կարելի է կազմել անսահմանափակ նորանոր բառեր: Դրանք ստեղծվում են բառաստեղծական միջոցներով, հայերենի բառակազմական եղանակներով:

Հետազոտողը, քննելով նորաստեղծ ներունակ (պոտենցիալ) բառերը, գրում է. «Պոտենցիալ բառերը ստեղծվում են բառաստեղծական միջոցների շտեմարանից, որը մեր լեզվում ունի անսպառ հնարավորություններ: Մի շարք արմատներ և ածանցներ ժամանակակից հայերենում նոր բառերի կազմության մեջ առանձնապես կենսունակ են, և նրանցից անսահմանորեն կարող են կազմվել նորանոր բառեր»²:

¹Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 171:

²Թ. Ղարազյուլյան, Լեզվի և ոճի հարցեր, հ.7, Ե., 1983, էջ 214:

Հողվածի նպատակն է ներկայացնել ժամանակակից հայերենի ներունակ նորաստեղծ բառերը, դրանց առավել հաճախական բաղադրիչները և կաղապարները:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի աշխատակիցները հատուկ ուշադրություն են դարձրել այն նորաստեղծ բառերին, որոնք բառարանագրված չեն, այսինքն՝ դուրս են մնացել ժամանակակից հայերենի բառարաններից:

Լեզվի ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսած «Նոր բառեր»-ի Ա-Ը պրակներում առկա են բավական շատ ներունակ նորաստեղծ բառեր: Դա հնարավորություն է տալիս ուսումնասիրելու բառաստեղծման, բառային կազմի համալրման գործընթացը ժամանակակից խոսույթում, և միաժամանակ ամրագրելու մի շարք արմատների և ածանցների բառակազմական լայն հնարավորությունները ժամանակակից հայերենում:

Հողվածը հիմնականում անդրադառնում է -կենտրոն, -բնակ, -մերձ, -ձև,

-տիպ, -խոս, -պատ վերջնաբաղադրիչներով, ինչպես նաև ինքն(ա)-, կիս(ա)-, կրկն(ա)- սկզբնաբաղադրիչներով կազմված նորաբանություններին:

Այսպես, ըստ «Նոր բառեր» պրակների բառացանկի՝ գործուն են -կենտրոն, -բնակ, -մերձ, -ձև, -տիպ, -խոս, -պատ վերջնաբաղադրիչներով նորակազմությունները: Հայ լեզվաբաններն արձանագրում են, որ ժամանակակից հայերենում նոր բառեր կազմելու զգալի հնարավորություններ կան երկու գոյականի և *ա* հոդակապի համադրությամբ: Օրինակ՝ *կենտրոն* գոյականը, որպես վերջնաբաղադրիչ դրվելով *անհատ* գոյականի վրա, *ա* հոդակապով կազմվում է *անհատակենտրոն* նորաստեղծ բառը: Նմանատիպ բարդ բառերից են *բազմակենտրոն*, *իշխանակենտրոն*, *ռուսաստանակենտրոն*, *վարչակենտրոն*, *գրչակենտրոն*, *հայրենակենտրոն*,

պտուտակակենտրոն, ավտոկենտրոն, երեխայակենտրոն, քաղաքացիակենտրոն, մեդիակենտրոն:

-Բնակ վերջնաբաղադրիչով կազմվել են *հունաստանաբնակ, մոսկվայաբնակ, սահմանաբնակ, երազաբնակ, տարտարոսաբնակ, պրահայաբնակ, բեյրութաբնակ, ստամբուլաբնակ, օվկիանոսաբնակ, դրիմաբնակ, շրջանաբնակ, արցախաբնակ* բառերը:

-Մերձ վերջնաբաղադրիչով՝ *ակումբամերձ, վաղամերձ, վանդակամերձ, եկեղեցամերձ, մայրուղամերձ, մահճակալամերձ:*

Հաճախադեպ են -ձն վերջնաբաղադրիչով նորակազմ բառերը. օրինակ՝ *գրպանաձն, թատերաձն, կակտուսաձն, կավաձն, քաջվարդաձն, կարասաձն, ուլունքաձն, քանդակաձն, սակրաձն, նշխարաձն, գդակաձն, սալիկաձն, պատասխանաձն, հավկիթաձն, ծալքաձն, ընձուղտաձն, քանդակաձն* և այլն: -Ձն և -նման արմատները անհամեմատ լայն կիրառություն ունեն, և թեև իմաստով շատ մոտ են, բայց -ձն-ով կազմությունները, ի տարբերություն -նման բաղադրիչով բառերի, վկայված չեն բառարաններում: Ամեն մի բառ կարող է գործածվել համապատասխան իրադրության մեջ. *կակտուսաձն- կակտուսանման, կարասաձն-կարասանման, գդակաձն-գդականման, սալիկաձն-սալիկանման, ուլունքաձն-ուլունքանման* և այլն:

Շատ են նաև -տիպ, -պատ, -դարան, -խոս, -վաճառ վերջնաբաղադրիչներով նորակազմությունները. ածականներ են -տիպ-ով կազմված *գորբուսատիպ, կայսերատիպ, ամրոցատիպ, ազնվատիպ, խարդախատիպ, ծածկոցատիպ, վագոնատիպ, գյուրգայատիպ* բառերը:

-Պատ-ով են բաղադրված *աղամանդապատ, ժապավենապատ, մուշտակապատ, գրանիտապատ, լիանայապատ, հրեշտակապատ, վարագուրապատ, դեղապատ, մազմզուկապատ* բառերը, որոնք հիմնականում ածականներ են:

Հետևյալ վերջնաբաղադրիչներով կազմվում են գոյականներ.

-Դարան՝ *կայքադարան, պնակադարան, հացադարան, ընտրադարան, հայադարան, գինեդարան:*

-Խոս՝ *գաղտնախոս, շոյախոս, բոցախոս, հպարտախոս, զագայախոս, սքանչելախոս, կոպտախոս, զրուցախոս, բազմալեզվախոս, կատալոնախոս, իսպանախոս, գերմանախոս:*

-Վաճառ՝ *հյուրավաճառ, չթավաճառ, թթվածնավաճառ, լեզվավաճառ, դիմակավաճառ:*

Ինչ վերաբերում է պրակներում առկա կիսա-, կրկնա-, ինքնասկզբնաբաղադրիչներով նորակազմ բառերին, ապա դրանք կարելի է անվերջ թվարկել՝ *ինքնազգզվանք, ինքնախարկանք, ինքնացուցադրանք, ինքնակտտանք, ինքնակարծիք, ինքնամորմոք, ինքնահրացում, ինքնահամոզում, ինքնակծկում, ինքնասօտարում, ինքնազարդարում, ինքնավնասում, կրկնաներկրում, կրկնապատում, կրկնախախտում, կրկնագող, կրկնագուլպա, կրկնայց, կրկնավարակ, կրկնադատարկ, կրկնաստորագրություն, կրկնաերագ, կրկնացատկ, կիսագույն, կիսասուտ, կիսաքմծիծաղ, կիսաորբ, կիսախողովակ, կիսաերագ, կիսածանոթ:*

Հատկանշական է, որ վերոնշյալ սկզբնաբաղադրիչներով առկա են նաև բայեր՝ *ինքնաբանտարկել, ինքնագողանալ, ինքնածախսածածկվել, ինքնահաճոյանալ, ինքնաներծծվել, ինքնաստրկացվել, ինքնահրկիզվել, ինքնամատուցվել, ինքնառչնչացվել, ինքնախարել, ինքնանույնանալ, ինքնավարձատրվել, ինքնաձերբազատվել, ինքնասպանվել, կրկնամրագրել, կրկնամնջել, կիսահրամայել, կիսախեղդվել, կիսախմել, կիսակապտել, կիսահատունանալ, կիսաշրջափակել, կիսաթեթևանալ, կիսաիջեցնել, կիսամոխրանալ, կիսակասեցնել, կիսաշշմել, կիսաթիկնել, կիսախոնարհել:*

Ստվար թիվ են կազմում այդ սկզբնաբաղադրիչներով նորակերտ բարդ ածանցավոր բառերը. *ինքնախմաստագուրկ, ինքնաստիպողական, ինքնահեզնական, ինքնասպանողական, ինքնաճանաչողական, կրկնաճուրղային, կիսանախագահական, կիսափայտաշեն, կիսախսպանացի* և այլն:

«Նոր բառեր» բառարանաշարի Ը պրակում բազմաթիվ են էներգա-սկզբնաբաղադրիչով նորակազմությունները, որոնք ստորև առանձնացվում են ըստ խոսքիմասային պատկանելության. այսպես՝

էներգա- սկզբնաբաղադրիչով՝

▪ գոյականներ՝ *էներգաերկխոսություն, էներգաաղբյուր, էներգաենթակառուցվածք, էներգարնդունիչ, էներգաճախասարարություն, էներգածրագիր, էներգակախվածություն, էներգահումք, էներգամիջանցք, էներգանորմ, էներգավթար, էներգատեսակ.*

▪ ածականներ. *էներգաճախասարար, էներգակարգավորիչ, էներգակուտակիչ, էներգահումքային, էներգամեքենաշինական, էներգավառելիքային*

Այս սկզբնաբաղադրիչով կազմվել է *էներգազրկել* բայը:

Միջ- սկզբնաբաղադրիչով նորակազմ բառերը հիմնականում ածականներ են, որոնք ունեն -ային, -ական, -իկ վերջածանցներ. *միջբանկային, միջդիրքային, միջթաղամասային, միջդասարանական, միջէթնիկ, միջթանգարանային, միջթեմական, միջթիմային, միջլեռնային, միջծրագրային, միջխորհրդարանական, միջհիմնարկային, միջհիվանդանոցային, միջճամբարային, միջմասնագիտական:*

Ներունակ բառերի ստեղծման հնարավորությունները անսահմանափակ են հատկապես նորաստեղծ գունանունների դեպքում, երբ իրացվում են լեզվի բառակազմանական հնարավորությունները:

Նորակազմ ներունակ գունանունները, ըստ կազմության, հիմնականում բարդություններ են: Դրանք կարող են կազմվել՝

1. ածականներից՝ *կարմրասև, կանաչակապույտ, սպիտակականաչ, դեղնադեղին, դեղնակապույտ, սևականաչ, սևասպիտակ, կարմրասպիտակ, դեղնասև, կարմրաճերմակ...*

2. Ածական + գոյական կաղապարի դեպքում՝

▪ *Կարմիր գունանվամբ՝ կարմրաեզերք, կարմրագոտի, կարմրանախշ, կարմրաերախ, կարմրախաչ, կարմրածայր, կարմրակոկոն:*

▪ *Դեղին գունանվամբ՝ դեղնաեղունգ, դեղնակն, դեղնալուծույթ, դեղնանիվ, դեղնացոլք, դեղնահոտ, դեղնաժանիք, դեղնամպ:*

▪ *Կապույտ գունանվամբ՝ կապտալույս, կապտածրար, կապտաթև, կապտակող, կապտագունդ, կապտակազմ, կապտապոչ, կապտահեր, կապտափոք:*

▪ *Սպիտակ գունանվամբ՝ սպիտակավիզ, սպիտակաթագ, սպիտակառոտ, սպիտակաթաթիկ, սպիտակատերև:*

▪ *Սև գունանվամբ՝ սևաթիկունք, սևամեջք, սևաշրջանակ, սևամշուշ:*

3. Գոյական + ածական կաղապարով՝ *կավճասպիտակ, կադենեկարմիր, արծաթակարմիր, արծաթականաչ, ժանգադեղին, մոխրակարմիր, մոխրասպիտակ, ոսկեսպիտակ, սալորակապույտ, մեղրադեղին, ցորնադեղին անտառականաչ, ելակակարմիր, լոռամրգակարմիր, ծղոտականաչ:*

4. Գոյական + գույն (գոյական) կաղապարով՝ *անմոռուկագույն, զմրուխտագույն, թեյագույն, կաղամբագույն, մետաղագույն, շափյուղագույն, սնդիկագույն, սուրբագույն, ցեխագույն, փշահաղարջագույն, փչակագույն...*

5. Երկրորդ բաղադրիչը ածական է. *երկաթագորշ, դարչնագորշ, դարչնաթուխ, դարչնաշեկ, դեղնաթաթախ, կապտագուլալ, կապտախիտ, կապտաշողուն կապտագուլավոր, կարմրաքաղցր...*

6. Երկու գոյական + գույն (գոյական) կաղապարով՝ *քրոնզանսկեգույն, արնաշագանակագույն, մանուշակամոխրագույն, շագանակամեղրագույն, շագանակադարչնագույն, մարգարտամոխրագույն, մոխրաշագանակագույն, շոկոլադաշագանակագույն, արծաթասնդիկագույն, ընկուզադարչնագույն, մոխրայասամանագույն, սադափամոխրագույն:*

-*Ավուն* վերջածանցը, ավելանալով գունանվան բառակազմական հիմքին, փոխում է գունային երանգը: Բերենք մի քանի օրինակ -*ավուն* վերջածանց ունեցող գունանուններից. *կանաչամոխրավուն, անանուխականաչավուն, կարմրագորշադեղնավուն, արծաթականաչավուն, կանաչասևավուն, գորշամոխրավուն, սևակապտավուն, գորշասևավուն, ոսկեկանաչավուն և այլն:*

Այսպիսով՝ պոտենցիալ (ներունակ) բառեր ստեղծելու հնարավորությունները անսահման են. դրանք կարող են ներառվել լեզվի բառապաշարի մեջ և հաճախական գործածություն ունենալ:

Հոդվածն անդրադառնում է «Նոր բառեր» պրակներում առկա նորակազմ ներունակ բառերին, դրանց հաճախական բաղադրիչներին և կաղապարներին: Կաղապարների, բաղադրական հիմքերի բազմազանությունը հնարավորություն էն ընձեռում կազմելու նորիմաստ բառեր:

Առանձնացվող բաղադրիչները, որպես արտադրողական կաղապարներ, նպաստավոր պայմաններ են ստեղծում բառի իմաստափոխության համար և նորիմաստ բառերի կազմության ժամանակ: Քննությամբ պարզվում է, որ ըստ «Նոր բառեր» պրակների բառացանկի գործուն են -կենտրոն, -բնակ, -մերձ, -ձև, -տիպ, -խոս, - պատ, վերջնաբաղադրիչներով, ինչպես նաև էներգ(ա)-, ինքն(ա)-,

կիս(ա)-, կրկն(ա)- սկզբնաբաղադրիչներով կազմված նորաբանությունները: Դրանք առանձնացվում են ըստ խոսքիմաստային պատկանելության: Ներկայացվում են նաև -գույն և -ավուն վերջածանցներով նորակազմ ներունակ գունանունները, որոնք հիմնականում բարդություններ են, և դրանցով փոխվում է գունանվան գունային երանգը:

Hovsepyan G. - Innovative Words in Modern Armenian with Potential to Create New Words (according to "New Words" books/dictionaries).- The article reflects on the newly formed "potential" words found in the "New Words" books, their frequency components and patterns. The diversity of templates and compositional bases provide an opportunity to create meaningful words.

The highlighted components, as productive templates, create favorable conditions for the semantic transformation of words and the formation of new meaningful words. The study reveals that according to the vocabulary list of "New Words," active suffixes include -kentron (-կենտրոն), -bnak (-բնակ), -merdz (-մերձ), -dzev (-ձև), -type (-տիպ), -khos,(-խոս) and -pat (-պատ) as well as new formations composed of prefixes like ener(gy)-, self-, half-, and repeat- ինքն(ա)-, կիս(ա)-, կրկն(ա)-). These are distinguished based on their semantic affiliation. Also presented are newly created compound color names with the suffixes -guyն (-գույն) and -avun (-ավուն), which are mainly compounds that change the color shade of the color name.

Key words: neologism, newly created and newly formed word, derivation, "potential" word (word with a potential to create new words), word formation, color name, template.

Овсепян Г. - Инновационные потенциальные слова в современном армянском языке (по данным книг/словарей "Новые слова"): В статье рассматриваются новые слова с потенциалом в книгах «Новые слова», их частотные составляющие и закономерности. Разнообразие шаблонов и композиционных основ дают возможность создавать новые осмысленные слова.

Выделяемые компоненты, как продуктивные шаблоны, создают благоприятные условия для семантической трансформации слов и формирования новых значимых слов. Исследование показывает, что согласно словарю практики «Новые слова» активными являются суффиксы -центр, -жилище, -близкий, -форма, -тип, -речь и -стена (-կենտրոն, -բնակ, -մերձ, -ձև, -տիպ, -խում, -ցիտ), а также новые образования, составленные из приставок энер(гия)-, само-, полу- и повтор- (էներգ(ա)-, ինքն(ա)-, կիս(ա)-, կրկն(ա)-). Они выделяются по семантической принадлежности. Также представлены новые составные названия цветов с суффиксами -цвет и -оттенок (-գույնի և -ափնն), которые в основном являются сложными словами и изменяют цветовой оттенок названия цвета.

Ключевые слова: неологизм, новообразованное слово, деривация, потенциальное слово (с потенциалом создания новых слов), словообразование, название цвета, шаблон.

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՈՒՄ**

Մարգարյան Ինգա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բ.գ.թ., գիտաշխատող

Մուտք

Այս աշխատանքով փորձ է արվում քննել արդի հայերենի հեռուստատեսության խոսքի բառապաշարային յուրահատկությունները: Հարկ է նշել, որ «հեռուստատեսության խոսք» եզրույթի գործածումը ենթադրում է հեռուստատեսության տարբեր բնագավառներում՝ լրատվական, տեղեկատվական, ժամանցային, սպորտային թողարկումների, գովազդների, կինոթարգմանությունների ժամանակ գործածվող նորակազմությունների ուսումնասիրություն: Նման նորակազմ բառերի տարածումն ու հանրայնացումն անխուսափելի է՝ պայմանավորված երկու հանգամանքով: Նախ՝ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային տեղաշարժերի, գիտության և տեխնոլոգիաների զարգացման հետևանքով առաջացած նոր երևույթներն անվանելու համար ստեղծվում են նոր բառեր, բառային միավորներ: Այդ փոփոխություններն ավելի արագ են արտացոլվում հեռուստատեսության բառապաշարում, ինչը, հանդիսանալով տարածման միջոց, նպաստում է, որ բազմաթիվ նոր բառեր սահուն և արագ մերվեն լեզվի բառային կազմին: Եվ երկրորդ՝ համացանցը, հեռուստատեսության ոլորտը ներառում է վերոնշյալ բոլոր բնագավառների պաշտոնական, էլեկտրոնային էջերն առցանց տիրույթում: Եվ բնական է, որ հեռուստատեսության միջոցով ստեղծված շատ բառեր տարածվում են ոչ միայն հեռուստացույց դիտելիս, այլև համացանցից օգտվելիս:

Այս աշխատանքով փորձ է արվում քննել արդի հայերենի հեռուստատեսության խոսքի բառապաշարային յուրահատկությունները: Հարկ է նշել, որ «հեռուստատեսության խոսք» եզրույթի գործածումը ենթադրում է հեռուստատեսության տարբեր բնագավառներում՝ լրատվական, տեղեկատվական, ժամանցային, սպորտային թողարկումների, գովազդների, կինոթարգմանությունների ժամանակ գործածվող նորակազմությունների ուսումնասիրություն: Նման նորակազմ բառերի տարածումն ու հանրայնացումն անխուսափելի է՝ պայմանավորված երկու հանգամանքով: Նախ՝ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային տեղաշարժերի, գիտության և տեխնոլոգիաների զարգացման հետևանքով առաջացած նոր երևույթներն անվանելու համար ստեղծվում են նոր բառեր, բառային միավորներ: Այդ փոփոխություններն ավելի արագ են արտացոլվում հեռուստատեսության բառապաշարում, ինչը, հանդիսանալով տարածման միջոց, նպաստում է, որ բազմաթիվ նոր բառեր սահուն և արագ մերվեն լեզվի բառային կազմին: Եվ երկրորդ՝ համացացը. հեռուստատեսության ոլորտը ներառում է վերոնշյալ բոլոր բնագավառների պաշտոնական, էլեկտրոնային էջերն առցանց տիրույթում: Եվ բնական է, որ հեռուստատեսության միջոցով ստեղծված շատ բառեր տարածվում են ոչ միայն հեռուստացույց դիտելիս, այլև համացանցից օգտվելիս:

ԻՏԵ՛Ս **Jelena Ilic Plauc, Ivona Šetka Čilić**, Today's Usage of Neologisms in Social Media Communication, *Journal of Humanities and Social Sciences* 6(1 (14)), 2021, էջ 116:

Ներածություն

Դասական և ժամանակակից լեզվաբանության մեջ նորաբանություն լեզվական ըմբռնումն ամենաշատ ուսումնասիրվողներից մեկն է: Բազմաթիվ ու տարաբնույթ կարծիքներ կան՝ նորաբանության տերմինային գործածություններին վերաբերող: Չնայած նորաբանություն և նորակազմություն հասկացությունների իմաստային ոչ հստակ սահմանազատմանը, այնուամենայնիվ լայն թափ առած դրանց ուսումնասիրությունը միշտ էլ արդիական է տվյալ ժամանակաշրջանի լեզվավիճակը, բառաստեղծման իմաստային և կառուցվածքային որոշակի միտումներն ու օրինաչափությունները գնահատելու համար: Այդ առումով անհերքելի է նաև ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի՝ 2015թ.-ից հրատարակվող «Նոր բառեր» բառարանի դերը:

Ուսումնասիրության համար առանձնացված հարյուրից ավելի նորակազմությունները հավաքել ենք հիմնականում հանրային հեռուստաընկերությունների թողարկումներից՝ Առաջին ալիք, Արմենիա, Հայկական երկրորդ հեռուստաալիք, 5-րդ ալիք, Կենտրոն, Երկիր մեդիա, Շանթ:

Մեթոդաբանություն

Այս հետազոտության ընթացքում հեռուստատեսության խոսքի նորակազմությունների ուսումնասիրության համար կիրառվել են լեզվաբանական մի շարք մեթոդներ: Հեռուստատեսության՝ ինչպես տեղեկատվական, այնպես էլ ժամանցային ու գովազդային հաղորդումներից հավաքվել են ավելի քան 100 նորակազմություններ՝ **տվյալների հավաքմամբ և ստուգմամբ**: Նորակազմությունների

բառիմաստային բացատրությունը կատարվել է հիմնականում Հայաստանի ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Նոր բառեր» բառարանաշարի, ինչպես նաև այլ հայերեն բառարանների օգնությամբ: **Խոսքիմասային և բառակազմական վերլուծությամբ** նորակազմությունները դասակարգվել են ըստ խոսքիմասային արժեքի, բառակազմական տիպերի և եղանակների, բաղադրիչների քանակի և կառուցվածքի: Հիմնականում ուշադրության կենտրոնում էին բարդ ու ածանցավոր ձևերը, ինչպես նաև յուրահատուկ, երբեմն սխալ կաղապարային կառուցվածքները: **Վիճակագրական վերլուծության միջոցով** փորձել ենք որոշել նորակազմությունների հաճախականության և տարածվածության բնագավառները: Արդյունքները ներկայացվել են աղյուսակային ձևաչափով: Տվյալները ցույց են տվել հեռուստատեսության խոսքում կիրառվող նորակազմությունների ազդեցությունն ու դերակատարումը՝ բառապաշարի նոր համակարգի զարգացման գործում:

Նորակազմությունների քննությունն ըստ բառակազմական տիպերի ու եղանակների

Մեր լեզվի բառակազմական առանձնահատկությունները, նոր բառեր կազմելու անսպառ հնարավորություններն ապահովում են նոր կազմությունների անխոչընդոտ անցումը բառապաշարի

² **Ս. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., 1944-1945: **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան Եր., 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969- 1980: **Ֆ. Խղաթյան**, Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), Եր., 1982: **Ռ. Մաքսալեստյան**, Արեւմտահայերեն-արեւելահայերեն նոր բառարան, Եր., 2011: **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002: Նոր բառեր, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Ա-Ը պրակ, Ե., 2015, 2016, 2017, 2018, 2020, 2021, 2022, 2023: **Փ. Մեյրիխանյան**, Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996:

գործուն շերտ: Բառակազմության օրինաչափություններին համապատասխան՝ նորակազմությունները ստեղծվում են բառաբարդում, ածանցում և հապավում եղանակներով: Նորակազմ բարդությունները հիմնականում համադրական տիպի կազմություններ են: Այդ առումով առանձնանում են բուն կամ իսկական տեսակները, նաև նկատվում է հատվածական բարդ բառերի (**եղանակակլիմայական, մարզառազմական**) գործածության ակտիվություն՝ պայմանավորված ոչ միայն նոր հասկացություններ նշելու պահանջով, այլև երկու կամ ավելի իմաստներ մեկ բառով արտահայտելու անհրաժեշտությամբ՝ որպես հաղորդակցման առավել տնտեսված և արտահայտիչ միջոց: Քանակապես գերակշռում են հոդակապով իսկական բարդությունները՝ **մանկասարք, եռակայուն, գաղափարաբառ, վիշապաշար, օծանագործ, սեղմապնակ, պահուստատուն, մոխրասյուն**: Սակավադեպ են առանց հոդակապի բարդությունները՝ **դասարվեստ, դիմերես, զարդերես, գնառաջարկ**:

Որոշակի թեմատիկ ուղղվածություն ունեցող տեղեկատվական, ծնողների, երեխաների իրազեկմանը, կրթությանն ու դաստիարակությանը նվիրված, բուժական բնույթի հաղորդումների ցուցադրման արդյունքում տարածվել են կազմություններ, որոնց հաճախ հանդիպող առաջնաբաղադրիչ արմատը գործածվում է տարբեր համակցություններով օր.՝ *դամբարանատարածք, դամբարանաբլուր* («Բաց երկնքի տակ», Հ1), *ծնողվարում, ծնողվարություն, ծնողակենտրոն, սեռակրթություն, սեռադաստիարակություն* («Օտողական ժողով», Հ1), *բուժայցելու, բուժառու* («Բուժինֆո», Ծանթ):

3 **Ս. Էլոյան**, Բառագիտություն. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, էջ 251:

Որոշիչ է ոչ միայն հաղորդաթերթերի, այլև գովազդային հոլովակների ցուցադրումը նորակազմությունների ստեղծման ու տարածման հարցում: Այս առումով հետաքրքրական են տարբեր իմաստային խմբերով կազմությունների առաջացումը: Առանձնացրել ենք հետևյալ խմբերը.

1. հագուստին, զարդերին վերաբերող հաղորդումներից հայտնի են դարձել **ջերմահագուստ, ջերմագուլպա, տարազախումբ, վիշապաշար** (Վահագն վիշապաքաղ աստծու ուժն ու տոկունությունը խորհրդանշող ազգային զարդանախշով վզնոց), **ուսապայուսակ** նորակազմությունները,

2. Երեխաներին, նրանց խնամքին վերաբերող գովազդային եթերներից ու համապատասխան պաշտոնական էջերից՝ **մանկասարք, կերակրասեղան, զբոսասայլակ, քայլագոտի,**

3. կենցաղին, տան վերանորոգմանը նվիրված գովազդներից՝ **քերծվածքակայուն, քերծվածքակայունություն, գիպասատվարաթուղթ, գիպասատվարաթղթե, հարվածակայուն, օճառապնակ,**

4. զբաղմունք, մասնագիտություն նշող՝ **օճանագործ, ուլունքագործ, տվյալագետ, տվյալագիտություն, էթնոքարաքոսաբանություն,**

5. խոհանոցային հաղորդումներից՝ **խմորակոլոլակ, նրբատաշեղ, բաղադրագիր,**

6. հեռուստատեսությանը, լրատվությանը վերաբերող՝ **հեռուստարնտանիք, ռադիոհեռուստաաշխարհ, կինոմարդ, մեդիասկումբ, մեդիագրագետ, մեդիասկադեմիա,**

7. տարբեր երևույթներ, առարկաներ նշող բազմաբաղադրիչ կազմություններ՝ **ծխախոտափող, առաջնաելույթ, կանգառահարթակ, ճաքաձև, լեռնահեծանվասպորտ, մոխրասյուն, կենդանատեր, իրավագիտակից, թատերահամերգասրահ:**

Որպեսզի պատկերացնենք, թե ո՞ր բնագավառն ունի զարգացման, նոր հասկացությունների ըմբռնման միտում, բերենք վիճակագրություն.

Խումբ	Քանակ	Տոկոսային հարաբերություն
Հագուստ և զարդեր	5	13.16%
Երեխաներ և խնամք	4	10.53%
Կենցաղ և տան վերանորոգում	6	15.79%
Զբաղմունք և մասնագիտություն	5	13.16%
Խոհանոցային տերմիններ	3	7.89%
Հեռուստատեսություն և լրատվություն	6	15.79%
Տարբեր երևույթներ և առարկաներ	9	23.68%

Տվյալները ցույց են տալիս, որ «Կենցաղ և տան վերանորոգում» «Հեռուստատեսություն և լրատվություն» բնագավառները մեր կյանքում ավելի արագ են զարգանում, ըստ այդմ՝ հարստացնում հասկացությունների կազմը:


Բավականաչափ բազմապատկվել են **-հեն** և **-հենք** բաղադրիչներով կազմությունները՝ համապատասխան նրբիմաստներով՝ **լրահեն, համակարգչահեն, գիտահենք, խնդրահենք, նախագծահենք, հետազոտահենք, բնահենք:**

Նշենք կարևոր հանգամանք, որ արմատների հաճախակի գործածումը երբեմն անհաջող կազմությունների ստեղծման պատճառ է դառնում. նկատվում է **-հեն** բաղադրիչի սխալ գործածում -

հենք-ի փոխարեն, ինչպես՝ չափորոշահեն, կարողունակահեն, արդյունքահեն, բուսահեն:

Վերջին շրջանում ուսումնասիրության առումով հետաքրքրություն են առաջացրել օտար բաղադրիչներով կազմությունները: Խոսքը **-էթն(ո), -էկ(ո)** սկզբնաբաղադրիչ կազմությունների մասին է, ինչպես՝ **էթնոքարաքոսաբանություն, էթնոցիդ, էթնոգոյն, էկոգնում, էկոաղբ, էկոնախաձեռնություն, էկոտոպրակ, էկոթեմա, էկոավան, էկոավտորու:**

Մրանց շարունակական ստեղծումն ու տարածումը պայմանավորված է ն՝ ժամանակաշրջանով, ն՝ հայերենացվող բաղադրամասերով նոր բառեր կազմելու անհրաժեշտ պահանջով: Լրատվական բնույթի հեռարձակումներից առանձնացրել ենք ևս մի քանի օտար բաղադրիչով կազմություններ՝ **մոպեդավար, դրոնավար, կրիպտոակտիվ:** Այս փոփոխությունները չեն սպառում բառապաշարի կատարելագործման բոլոր դրսևորումներն ու իրողություն-



ները. դրանք առավել ընդհանուր և ակնհայտ իրողություններ են,

որոնք ուրվագծում են միայն մեր լեզվի բառապաշարի կատարելագործման հիմնական դրսևորումներն ու միտումները:

Ածանցմամբ ստեղծվող նորակազմությունները բառամթերքը հարստացնելու ևս մեկ կարևոր միջոց են: Հեռուստատեսության խոսույթում գերակշռում են **հակա-** նախածանցով կազմությունները, ինչով հավասարաչափ կազմվում են և՛ ածականական, և՛ գոյականական կաղապարներ՝ **հակաբորբոսային, հակասայթաքուն, հակակոռուպցիա, հակառեկորդ, հակառեկորդակիր:**

Վերջածանցներից բավականաչափ գործուն է **-ում-ը՝ տոմսավավերացում, այգեհիմնում, ռադիոհսկում:** Վերը նշված օրինակներից նաև ակնհայտ է **-ություն-**ի բառակազմական ակտիվությունը՝ հատկապես բարդ բառերի կազմություններում՝ **կարողունակություն, բազմակուսակցություն, պետականապահպանություն:**

Տարբեր հեռուստաալիքների եթերներից, սոցհարթակներից առանձնացրել ենք ածանցավոր կազմությունների բավականին տարածված և գործուն գոյականական և ածականական կաղապարներ՝ **անվանարան** (հատկանունների բառացանկ՝ բառարան), **գրքատուն** (գրքի տուն), **գորգվոռոցի** (գորգ ցուցադրելու փառատուն), **հայտորոշիչ** (նախնական գիտելիքները որոշող՝ բացահայտող), **կենսապաշտպանիչ** (կենսականությունը պաշտպանող), **միջսեզոնային** (սեզոնների միջև եղող՝ գործող), **կիսամիայլատ** (կիսով չափ փայլատ), **բազմակիրառելի** (բազմակի կիրառություն ունեցող), **երկ-քարտանի** (երկու քարտ ունեցող):

4 **Է. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 195:

5 Տե՛ս **Ս. Էդյան**, Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963, 98-130:

6 Բառակազմական կաղապարների մասին տե՛ս **Ս. Գալստյան**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978:

Ապահովագրական ծառայությունների տարածումը նպաստում է նաև նոր հապավումների կազմությանը: Վերջինս գոյականական բառակապակցության բաղադրիչների կրճատումով կազմված բառարժեքային միավոր է, որը պահպանում է բառակապակցության կաղապարը և հիմնական բաղադրիչի խոսքիմասային արժեքը⁷, ինչպես՝ **զինապահ** (զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամ), **բնակապահովագրություն** (բնակարանների ապահովագրություն):

Հեռուստատեսության խոսքը ճկուն է նոր ու հետաքրքիր բառեր կազմելու ու դրանք տարածելու և կարևոր՝ բառապաշարը շարունակաբար հարստացնելու, թարմացնելու տեսանկյունից: Նման կազմությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել արդի շրջանի լեզվավիճակի, դրա փոփոխության, բառաստեղծման որոշակի գործընթացի, բառակազմական տարբեր օրինաչափությունների, բառապաշարի զարգացման ուղիների վերաբերյալ:

Եզրակացություններ

Այս հետազոտությունը ցույց է տալիս, որ արդի հայերենի բառապաշարի զարգացումը, հատկապես հեռուստատեսության ոլորտում, բնորոշվում է նորակազմությունների ակտիվ կիրառությամբ: Նկատվում է **թեմատիկ բազմազանություն**, այսինքն՝ հեռուստատեսության խոսքում հայտնվում են բազմաթիվ թեմատիկ

⁷ **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 227:

⁸ Տե՛ս **Daniela Landert, Tanja Säily, Mika Hämäläinen**, TV series as disseminators of emerging vocabulary: Non-codified expressions in the TV Corpus, ICAME Journal, 47(1), 2023, էջ 64:

նորակազմություններ, որոնք ընդգրկում են լայն ոլորտներ, ինչպիսիք են հագուստն ու զարդերը, երեխաների խնամքը, կենցաղը, մասնագիտություններն ու զբաղմունքները, խոհանոցային տերմիններն ու լրատվության ոլորտը: Այս ամենը վկայում է ժամանակակից կյանքի տարաբնույթ ոլորտների լեզվական համալրման մասին: **Բառակազմական բազմազանություն** է նկատվում հայերենում. նոր բառեր ստեղծելու համար կիրառվում են թե՛ բարդումը, թե՛ ածանցումը, որոնք խոսքի տնտեսման և լեզվական բազմազանության ապահովման կարևոր միջոցներից են: Հատկապես հաճախ են կիրառվում համադրական բարդությունները՝ **դամբարանատարածք, ծնողավարություն, բուժառու: Համացանցի ազդեցությունը** բավականին մեծ է նորակազմությունների արագ տարածման առումով: Հեռուստատեսության պաշտոնական էջերի առցանց առկայությունը նպաստում է նոր բառերի սահուն և արագ մուտքին՝ հանրային օգտագործման բառապաշար: **Անհաջող կազմությունների տարածման վտանգ** է նկատվում, և, կարծում ենք, պետական հսկողության խիստ պահանջ կա: Թեև նորակազմությունները կարևորվում են լեզվի զարգացման համար, սակայն նկատվում են նաև անհաջող կազմություններ, մասնավորապես **-հեն** և **-հենք** բաղադրիչների սխալ կիրառմամբ ստեղծված բառերը, ինչը լեզվական ճիշտ մշակման անհրաժեշտության մասին է խոսում:

Маргарян И. - Нововведения современного армянского языка в речи телевидения.-В этой работе мы исследуем лексические особенности современной армянской телевизионной речи. Мы изучили новые слова, используемые в различных областях телевидения: новости, информация, развлечения, спорт, реклама, переводы фильмов. Распространение и популяризация таких новообразованных слов неизбежна в силу двух обстоятельств: во-первых,

создаются новые слова для обозначения новых явлений, вызванных общественно-политическими, социально-экономическими, культурными сдвигами, развитием науки и техники. Эти изменения быстрее отражаются в лексиконе телевидения и способствуют к тому, что многие новые слова плавно и быстро пополняют лексический состав языка. Во-вторых, важную роль играет Интернет. Телевизионная индустрия включает в себя официальные электронные страницы всех вышеупомянутых областей в онлайн-пространстве. И, естественно, многие термины, связанные с телевидением, распространяются не только при просмотре телепередач, но и при использовании Интернета. Это исследование показывает, что развитие словарного запаса современного армянского телевизионного языка характеризуется активным использованием неологизмов. Наблюдается тематическое разнообразие, то есть в телевизионной речи появляются многочисленные тематические неологизмы, охватывающие широкий спектр областей, таких как одежда и украшения, уход за детьми, повседневная жизнь, профессии и род занятий, кулинарные термины и индустрия новостей. Все это свидетельствует о языковом пополнении различных сфер современной жизни. В армянском языке существует словообразовательное разнообразие. Для создания новых слов используются как словосочетания, так и деривация. Особенно часто используются сложные словосочетания. Влияние Интернета довольно велико с точки зрения быстрого распространения новых слов. Наличие официальных страниц онлайн-телевидения способствует плавному и быстрому внедрению новых слов в общественный лексикон. Хотя неологизмы ценятся для развития языка, существует также риск распространения неудачных образований.

Margaryan I. - Innovations of the modern Armenian language in the speech of television.-In this work, we explore the lexical features of modern Armenian television speech. We have studied new words used in various fields of television: news, information, entertainment, sports, advertising, film translations. The spread and popularization of such newly formed words is inevitable due to two circumstances: First, new words are being created to denote new phenomena caused by socio-political, socio-economic, cultural shifts, the development of science and technology. These changes are reflected more quickly in the vocabulary of television and contribute to the fact that many new words are smoothly and quickly added to the lexical composition of the language. Second, the Internet plays a significant role. The television industry includes the official electronic pages of all the above-mentioned areas in the online space. And naturally, many terms originating from television are disseminated not only through television viewing but also through internet usage. This research shows that the development of the vocabulary of modern Armenian television language is characterized by the active use of neologisms. A thematic diversity is observed, that is, numerous thematic neologisms appear in television speech, covering a wide range of areas such as clothing and jewelry, childcare, everyday life, professions and occupations, culinary terms, and the news industry. All this testifies to the linguistic replenishment of various spheres of modern life. There is a word-formation diversity in the Armenian language. Both compounding and derivation are used to create new words. Complex word combinations are especially often used. The influence of the Internet is quite large in terms of the rapid spread of new words. The availability of official online television pages contributes to the smooth and rapid entry of new words into the public vocabulary. Although

neologisms are valued for language development, there is also a risk of the spread of unsuccessful formations.

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան Եր., 1976:
2. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
3. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978:
4. Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963:
5. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:
6. Էլոյան Ս., Բառագիտություն. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, էջ 251:
7. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969- 1980:
8. Խլղաթյան Ֆ., Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), Եր., 1982:
9. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., 1944-1945:
10. Մեյթիխանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996:
11. Նոր բառեր. Ա պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:
12. Նոր բառեր. Բ պրակ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2016:
13. Նոր բառեր. Գ պրակ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2017:

14. Նոր բառեր. Դ պրակ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2018:
15. Նոր բառեր. Ե պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. , 2020:
16. Նոր բառեր. Զ պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021:
17. Նոր բառեր. Է պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022:
18. Նոր բառեր. Ը պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023:
19. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:
20. Սաքապետոյան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Եր., 2011:
21. Daniela Landert, Tanja Säily, Mika Hämäläinen, TV series as disseminators of emerging vocabulary: Non-codified expressions in the TV Corpus, ICAME Journal, 47(1), 2023:
22. Jelena Ilic Plauc, Ivona Šetka Čilić, Today's Usage of Neologisms in Social Media Communication, Journal of Humanities and Social Sciences 6(1 (14)), 2021

ՀԱԳՈՒՍՏ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՌԵՐԸ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Մարգարյան Ռեբեկա

Երևանի պետական համալսարան,
հայոց լեզվի ամբիոնի դասախոս,
բ.գ.թ., դոցենտ

Բանալի բառեր. բառապաշար, իմաստային դաշտ, դարձվածային միավորներ, իմաստավորվել, սոցիալական անարդարություն, բարոյական նորմեր, նորաբանություն, դարձվածքներ:

Լեզուն նյութական աշխարհի, նրանում գործող փոխհարաբերությունների դրսևորումն է, իսկ լեզվի բովանդակային կողմը՝ նյութական աշխարհի արտացոլումը: Ժամանակակից լեզվաբանության հիմքում ընկած է լեզվի իմաստային-իմաստաբանական կողմի քննությունը: Լեզվի ներքին՝ բովանդակային կողմի վերլուծության հիման վրա 20-րդ դարի 60-70-ական թվականներին լեզվաբանության մեջ առաջ եկան այսպես կոչված լեզվաբանական դաշտերի մի շարք տեսություններ: Այս իմաստային դաշտերը բազմակողմանիորեն քննվել են ռուսական և եվրոպական գրականության մեջ, մինչդեռ հայ լեզվաբանության մեջ վերջին տասնամյակներում է, որ բառապաշարի որոշ խմբերի վերաբերյալ գրվել են հոդվածներ, մենագրություններ և պաշտպանվել են ատենախոսություններ: Արդի հայերենն ունի բավական հարուստ բառապաշար: Այդ բառապաշարի մեջ իրենց ուրույն տեղն ունեն հագուստ անվանող արմատական բառերը, բառաբաղադրությունները, նորաբանությունները, նորակազմությունները, այն նոր ու նորագույն փոխառությունները, որոնք առայժմ չունեն իրենց համարժեքները, հնաբանությունները՝ հնաբառերը և պատմաբառերը:

Հայ լեզվաբանական գրականության մեջ դարձվածային միավորների (համառոտագրությունը՝ դմ) վերաբերյալ գրվել են մի շարք տեսական աշխատություններ, որոնցում հանգամանորեն քննվել են դմ-ների իմաստները, կառուցվածքը և ոճական արժեքը: Սակայն դմ-ները՝ որպես իմաստային դաշտի, մասնավորապես **հագուստ անվանող** բառերի իմաստային դաշտի արտահայտման լեզվական միջոցներ, դեռևս ուսումնասիրված չեն: Մեր խնդիրն է ներկայացնել հագուստ անվանող բառերով կազմված դմ-ները և դրանք խմբավորել ըստ նրանց արտահայտած դարձվածային ընդհանուր իմաստների⁹:

Հաճախ հագուստի անվանումները, այլ բառերի հետ կապակցվելով, վերաիմաստավորվում են, արտահայտում մարդկային գանազան հարաբերություններ, առօրյա-կենցաղային երևույթներ և ժողովրդի վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Դմ-ները, լինելով տվյալ ժողովրդի իմաստության, բնավորության, բարոյական նորմերի արտահայտիչներ, ծնվում են տվյալ ժողովրդի հետ և ուղեկցում են նրան նրա գոյատևման ողջ ընթացքում: Սակայն ժողովրդի կյանքի որոշակի փուլերում, կապված քաղաքական, տնտեսական, բարոյական չափանիշների, մտածելակերպի փոփոխության հետ, որոշ դմ-ներ հնանում են, դառնում **հնարանություններ**. նրանց փոխարինելու են գալիս նորերը՝ **նորարանություն-դարձվածքները**¹⁰:

Դմ-ներում շոշափվում է **սոցիալական** անարդարության

⁹ Տե՛ս Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1978, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986

¹⁰ Հագուստի անվանումներով կազմված դմ-ների վերաբերյալ փաստական նյութը քաղել ենք Ա.Սուքիասյանի, Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանից» (1975) և Խ. Բաղիկյանի «Դարձվածային ոճաբանությունից» (2000), «Ուսումնական դարձվածաբանական բառարանից» (2003) և մամուլից:

խնդիրը՝ որպես հավերժական թեմա:

Հագուստի անվանումներով կազմված դմ-ներով մեզ են ներկայանում մարդկային երկու հակադիր բևեռներ. աղքատը, խեղճը, փող չունեցողը արժանանում է ժողովրդի կարեկցանքին, ինչպես՝ **գրպանում մկներ են ման գալիս, մի թել քաշես, հազար կարկատան կթափվի, գրպանը դատարկ , գրպանը նիհար, գրպանը ծակ**: Վերջինս ունի նաև բացասական երանգ: Սրանով բնութագրվում է նաև շոայլ ծախսողը, փողի արժեքը չիմացողը:

Բացի նշված իմաստներից՝ լրացուցիչ այլ իմաստ է արտահայտում **վերջին թելն ընկնել** դմ-ը. այստեղ խոսվում է ինչպես անձի սնանկանալու, ունեցվածքից զրկվելու, այնպես էլ առհասարակ ֆիզիկապես հյուծվելու, սաստիկ նիհարելու, մահվան շեմին հասնելու մասին:

Շալե շապիկ հագնել, շատ դատողին՝ շալե շապիկ հումանիշ դմ-ներում քննվում են կյանքի հակասական կողմերը. չափազանց շատ դատող, աշխատասեր, բարեխիղճ մարդը ըստ արժանվույն չի գնահատվում, իր վաստակին համեմատ չի վարձատրվում: Ընչազրկության մասին է խոսում նաև **մի շապիկով մնալ** դմ-ը:

Ի տարբերություն ընչազուրկների՝ ինչքի տեր դառնալ, փող կուտակել ցանկացողը **աշխատում է մեկի գրպանը մտնել**, ուրիշի պատկանելիքը յուրացնել, շահ ստանալ, **գրպանը լցնել, գոտին հաստացնել**: Նշված իմաստներին են առնչվում **փափախ գործ, փափախ անել** հասարակ ոճի դմ-ները, որոնցով ժողովուրդն իր բացասական վերաբերմունքն է արտահայտում անօրինական ճանապարհով, խարդախությամբ, խաբեբայությամբ շահույթ ստանալու, եկամուտ ձեռք բերելու երևույթի նկատմամբ, մի երևույթ, որի հետևանքով որոշ մարդկանց **գրպանը լիքն է, գրպանը հաստ, գրպանը տռուզ**: Խորիմաստ է **հոգին գրպանը դնել** (խիղճը ծախել (կորցնել) դմ-ը, որով մերկացվում են այն մարդիկ, ովքեր շահի

համար, ինչ-ինչ նկատառումներով մեղանշում են արդարության դեմ, անցնում են անարդարության կողմը, այնինչ ժողովուրդը **ձեռնակ ձեռնոց** դմ-ով պահանջում է մաքրություն, անբասիրություն, ազնվություն, մաքուր խիղճ:

Մարդու բարձրագույն հատկանիշն է **բարբարեգործությամբ** զբաղվելը. ուրիշին օգնել, բարյացակամ լինել, մեկի համար հույս ու ապավեն դառնալ, նրա համար իր միջոցները տրամադրել, ոչինչ չխնայել: Ահա սրանք են **հագի շապիկը չխնայել** (ձեռքից եկածը չխնայել), **շապիկին թիկունք լինել** դմ-ների հիմնական իմաստները:

Մարդու բարձրագույն հատկանիշների՝ **անձնուրացության, նվիրվածության** մասին է խոսվում **միչև վերջին թելը** (մինչև վերջին շունչը) դմ-ում: Այստեղ չափազանցության միջոցով փառաբանվում են այն մարդիկ, ովքեր իրենց հոգեկան և ֆիզիկական հատկանիշները լրիվ, ամբողջ ծավալով, առանց մնացորդի ներդնում են ժողովրդի բարօրության համար:

Մարդկանց **հովանավորելու** գաղափարն է շոշափված նակ **փեշի տակ առնել, փեշը վրան գցել, փեշին կապել, փեշը բռնել** դմ-ներում: Առաջին երկուսում պահանջվում է մարդուն, կարիքավորին հովանավորել, հսկողության տակ պահել, նրա խնամքով զբաղվել, մյուսում՝ մեկի հովանավորությամբ ապրել, մեծանալ, գործել, երրորդում և չորրորդում նշվում է, որ որոշ հանգամանքների բերումով մարդ զգում է ուրիշի կարիքը, կաչում է նրանից, խնդրում է նրան հովանավորել իրեն: Վերոհիշյալ մտքերին չի հակասում այն փիլիսոփայությունը, որ մարդ նախ իր մասին պիտի մտածի, իր հարցերը լուծի, նախ իր **ծառը ջրի**, այսինքն՝ առաջնորդվի **սեփական շապիկը մարմնին ավելի մոտ է** կարգախոսով:

Դմ-ներում արտահայտված են **ազգային բնավորության յուրահատուկ գծեր**՝ պահանջ տղամարդու դերի գերազնահատման,

արժանապատվության բարձրացման վերաբերյալ: Այսպես, արժանապատվությունից զուրկ, կնոջ թելադրանքով շարժվող, կնոջը ենթարկվող տղամարդը բնութագրվում է **կնոջ փեշի տակ մտնել** դմով: Երբ տղամարդը իրեն պահում է տղամարդուն ոչ վայել, այլ կնաբարո, հեղինակություն չի վայելում և հարգանքի չի արժանանում, ուստի ժողովուրդը նախատում է նրան **լաչակ կապել, փափախ չունի գլխին** արհամարհական արտահայտություններով:

Ընտանիքի բարոյական դեմքը, կնոջ կամ աղջկա վատ վարքագիծը անարգում է տղամարդուն, պատվագուրկ անում նրան, **գլխարկը գետնովն է տալիս** (փափախը գետնովն է տալիս): Հակառակ դրան՝ ամաչելու, քաշվելու առիթ չունեցող հպարտ, համարձակ, ինքնավստահ տղամարդը **գլխարկը թեք է դնում** (փափախը թեք (ծուռ) է դնում):

Խիստ պատկերավոր է **ծալել, գրպանը դնել** ժողովրդական արտահայտությունը: Վերջինս ասվում է այն դեպքում, երբ անհատը (տղամարդ կամ կին) իր շրջապատի այլ մարդկանց նկատմամբ ավելի շատ առավելություններ ունի, իւելոք է, ուժեղ, բանիմաց: Ի դեպ, որոշ դեպքերում նշված դմ-ը կարող է լինել նաև պարծենկոտության արտահայտություն:

Մարդկային **բարոյական** բազմաթիվ **նորմեր, կենցաղային հարաբերություններ, կապեր, երևույթներ** են դրսևորված այլ դարձվածքներում: Փաստենք դրանցից մի քանիսը՝ **իրար օձիք բռնել** (բաց չթողնել(խսկց.՝ բկին չոքել), **օձիքը բռնել** (օձիքից կախվել), **օձիքը բաց չթողնել**: Առաջինում շոշափվում է անհամերաշխության, միշտ կովի պատրաստ լինելու, փոխադարձ բամբասանքի և շատախոսության, իսկ մյուսներում՝ իր ցանկացածին հասնելու համար մեկին նեղը զցելու, ստիպելու, հարկադրելու, պատասխանատվության կանչելու, ոչ ցանկալի գործողության մղելու հարցեր: Նշված իմաստները ցայտուն են արտահայտված **երկու ոտքը մի կոշիկի**

(մաշիկի) **մեջ դնել** դմ-ը:

Շատ հետաքրքիր է **շունը շապիկ է հագել, կատուն՝ վարտիք** դմ-ը, որտեղ չափազանցության միջոցով ընդգծվում է կարգ ու կանոնի բացակայություն, իրարանցում, խառնաշփոթ իրադրություն, երբ կարծես թե անհնարինը դառնում է հնարավոր:

Փեշը թափ տալ (հումանիշ՝ ձեռք քաշել, ձեռքերը լվանալ) դմ-ում այն մասին է խոսվում, որ մարդ պետք է հրաժարվի այն գործից, գործարքից, որը վտանգավոր է, որին ինքը չի ուզում մասնակցել, չի խրախուսում այն: Զիջելու, ներելու իմաստ է արտահայտում **քարը փեշից գցել** դմ-ն:

Հակադիր իմաստներ ունեն **օձիքը բաց թողնել** (ձեռք քաշել) և **օձիքը ձեռքը տալ** (սանձերը հանձնել մեկին)դմ-ները: Առաջինում դիմացինից պահանջվում է ձեռք քաշել, հանգիստ թողնել, չպարտադրել, չպահանջել որևէ բան, մյուսում անհատը հանձնվում է մեկին, ինքնուրույնությունից զրկվում է, կախվածության մեջ է ընկնում դիմացինից:

Ինչպես կյանքի կարևոր իրադարձությունների, այնպես էլ **կենցաղային, առօրյա** մանր, աննշան երևույթներ են արտացոլված հագուստի անվանումներով կապված դմ-ում: Այսպես, մի բան գաղտնի, թաքուն անելու կամ մեկին նախազգուշացնելու, արարքները կանխելու համար ստեղծվել են **փեշի տակից, փեշը քաշել** դմ-ները:

Իմաստային նուրբ տարբերություններ ունեն **գոտին թուլացնել** (պատրաստվել լավ, կուշտ ուտելու) և **գոտին պնդացնել** (լավ կուշտ ուտել) դմ-ները: Վերջին դմ-ը պահանջում է նաև դիմակայել չունևորությանը, սակավապետ լինել, քչակերությանը վարժվել:

Ոչինչ չի վրիպում ժողովրդի ուշադրությունից: Նա անողորմ է **անարդարության, շողոքորթության, քծնանիքի, անբարոյական վարքագծի** նկատմամբ, ուստի մարդկային այդպիսի արատները

դիպուկ բնութագրում է *փեշը համբուրել, փեշը կեղտոտ, շապիկը կարճ, կապը կտրած, կապը քաշել, ձեռքի թաշկինակ* դմ-ներով:

Յուրաքանչյուր բացասական երևույթ, կեղծիք վերջիվերջո բացահայտվում է, *քողը պատտվում է, մարդու աչքի քողն ընկնում է*, և երևան է գալիս ճշմարտությունը:

Քանի որ հագուստ անվանող բառերը հիմնականում ժողովրդախոսակցական բառաշերտին են պատկանում, ուստի նրանցով կազմված դմ-երը բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, սակայն չեն բացառվում նաև գրքային, բարձր ոճի դմ-ները: Հատկապես ուշադրության արժանի են *թել* բառով կազմված այն դմ-ները, որոնցում ներկայացված են մտածողության որոշակի փուլեր, տարբեր պահեր: Այսպես, մտքի *թելը կտրել (կտրվել)* դմ-ն ասվում է այն ժամանակ, երբ մարդու մտածողության ընթացքը դադարում է, կամ հնարավոր չի լինում այն լրիվ վերականգնել, իսկ երբ մտքի տրամաբանական ընթացքը շփոթվում է, խառնվում, գործածվում է *մտքի թելը կորցնել* դմ-ը: Մտածողության հաջորդ փուլում անհատը *կծկում է մտքի թելը*, այսինքն՝ լարում է հիշողությունը, կենտրոնանում և սկսում է սևեռուն մտածել: Բարձր ոճի դարձվածք է նաև *կարմիր թելի պես* (նման) արտահայտությունը: Այստեղ էականը ըստ էության *կարմիր* ածականն է, որով ընդգծվում է երևույթի հիմնական իմաստը:

Գեղարվեստական գրականության մեջ հաճախ կարդում եք *ձեռնոց նետել* և *ձեռնոց վերցնել* դմ-ները, որոնք խորհրդանշում են հակառակորդին մենամարտի հրավիրելու և մենամարտն ընդունելու կարգը: Պատմական արժեք ունի *ստոյլայինյան փողկապ* բառակապակցությունը, որը նույնպես խորհրդանշում է դաժան պատիժ կախաղանի միջոցով:

Վերջին տասնամյակներում մեր լեզվի մեջ մտավ *կրակե շա-*

պիկ կայուն բառակապակցություն-նորաբանությունը, որտեղ մարդու հոգեկան և ֆիզիկական բոլոր տեսակի տառապանքներն ու չարչարանքները մարմնավորված են թափանցիկ, խիստ դիպուկ, խոսուն լեզվական յուրահատուկ կառուցվածքով: Նույն դմ-ի իմաստի ծավալմամբ կազմվել է նաև **պարտքը կրակե շայիկ** է դմ-ը: Նորաբանություն է **ժիլեսի թև** դմ-ը, որը հեզնանքով ակնարկում է ընդհանրապես գոյություն չունեցող անձ, առարկա, երևույթ, գործողություն:

Հաճախ խոսքը պատկերավոր, կենդանի դարձնելու համար չափազանցության ոճական հնարանքով կազմվում են դմ-նորաբանություններ, որոնք ունեն երգիծական բնույթ: Այսպիսին է **սառույցի վրա ոտնամաններով ման գալ** դմ-ը, որն ուսուցանում է վտանգավոր քայլից խուսափել, զգուշանալ, գալիք վտանգի մասին նախապես մտածել:

Չափազանցության հնարանքով է ստեղծվել **կոշիկները կեղտոտել** նորաբանությունը, որն զգուշացնում է, որ չպետք է անտեղի աղմուկ բարձրացնել, աննշան հարցերը մեծացնել:

Նոր դարձվածքներ են մտել լեզվի պաշտոնական ոճերում: Հաճախ պաշտոնական հանդիպումների ժամանակ եթերից հնչում է **հանդիպում առանց փողկապի** դարձվածային նորաբանությունը, որով մեզ հայտնում են, որ տեղի է ունենալու ոչ պաշտոնական, ազատ, անկաշկանդ բարեկամական հանդիպում երկու կողմերի միջև:

Մարզական կյանքում կան ևս շրջասույթ-նորաբանություններ, որոնք դարձվածային արժեք ունեն, ինչպես՝ **կաշվե ձեռնոց** (բոքս), **սև գոտի, սպիտակ գոտի** (կարատե) ևն:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, հագուստ անվանող բառերը, կապակցվելով այլ բառերի հետ, վերա-

իմաստավորվում են, դառնում են ժողովրդի իմաստության, բնավորության, բարոյական չափանիշների արտահայտիչներ: Ժողովրդի մտածելակերպի փոփոխության հետ որոշ դարձվածային միավորներ հնանում են, դառնում հնաբանություններ. սրանց փոխարինելու են գալիս նորերը՝ նոր դարձվածքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
2. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986:
3. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000:
4. Բաղիկյան Խ., Ուսումնական դարձվածաբանական բառարան, Եր., 2003:
5. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1978:
6. Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Եր., 1980:
7. Սուրբիսյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982:
8. Axayan Ed., Ardi hajereni bacatrakan bararan, Er., 1976:
9. Badikjan Ch., Jamanakacic hajereni darsvasajin miavornery, Er., 1986:
10. Badikyan Ch. Darcvasajin voshabanutyun, Er., 2000:
11. Badikyan Ch., Usumnakan darcvasabanakan bararan, Er. 2003:
12. Bediryan P. Jamanakacic hajereni darsvasabanutjun, Er., 1978:
13. Jahukyan G., Axajan Ed., Araqeljan V., Qosyan V., Hajoc lezu, 1-in mas, A. Prak, Er., 1980:
14. Suqiasyan A., Jamanakacic hajoc lezu, Er., 1982:

Маргарян Р. - Слова во фразах, обозначающие одежду.-

Современный армянский язык имеет довольно богатый словарный запас. В этой лексике своё место занимают слова, называющие одежду. Часто названия одежды, ассоциируясь с другими названиями, переосмысливаются, выражая различные человеческие отношения, повседневные бытовые образы и отношения людей к ним.

Ключевые слова: лексика, смысловое поле, фразовые единицы, осмысление, социальная несправедливость, нормы морали, фразы-нововведения.

Margaryan R.- Words Denoting Clothes in Idioms.-

Modern Armenian has a fairly rich word stock. Words denoting clothes have their unique place in this word stock. Very often, names of clothes, combined with other words, gain a new meaning and express various social relations, every day events phenomena, as well as people's attitude towards them.

Key words: semantic field, phraseological units, make sense, social injustice, ethical norms, neologisms, idioms.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գալատյան Անահիտ, Թեյյան Լեոնիդ - Հայերենի անել բայի իմաստագործառական քննություն.....	3
Խաչատրյան Վալենտին - Հայերենի խառը հապավումները. դասակարգման, տարբերակման եվ գրության որոշ խնդիրներ.....	11
Խաչատրյան Օֆեյյա, Տիոյան Սուսաննա - Կիրառական արվեստի մի քանի տերմինների շուրջ.....	34
Հակոբյան Ֆրիդա - The impact of artificial intelligence on modern electronic lexicography.....	40
Հակոբյան Ֆրիդա - Նոր բառերի ներկայացման եղանակները հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանում.....	53
Հովսեփյան Գայանե - Նորակազմ ներունակ բառերը ժամանակակից հայերենում (ըստ «նոր բառեր» բառարանաշարերի).....	67
Մարգարյան Ինգա - Արդի հայերենի նորակազմությունները հեռուստատեսության խոսքում77.....	77
Մարգարյան Ռերեկա - Հագուստ անվանող բառերը դարձվածքներում92.....	92
..	

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ.
Հ. ԱՄԱԼՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՍՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2024 թ., հոկտեմբերի 10)

Ձևավորումը և էջադրումը՝ Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի